

~~1374~~

891.99
10-82

ԱՐԵՎԱԿ ԹԱՐԱՎԵԱՆ

6 NOV 2011

867

891.99
P-82

ՅԱՀԻՏԵՆԱԿԱՆ

ՀԵՔԻԱԹՆԵՐ



Ա. Էջմիածին

Ելեմուռական Տպարան Մայր Արքուոյ
1919 թ.

19 APR 2013

31795

Քան զմէրն այլ քաղցրիկ պառւղ ի
յաշխարհս չաւտամ, թէ լինի.
Շէքէրն նշով շաղւած՝ մօտ ի սէրն
է դառն ու լեղի.
Զհամն ալ տոի ես այլ, սիրոյ տէր
եղայ հետ քեզի.
Սէրդ ալ իմ սրտիս դու տուր, քո
սիրուդ եմ ճորտ ու գերի:
Ստեղծնող, զքո ստեղծած ծառան
մի մատնիլ ի ձեռն սիրոյն,
թէ ձեռն ի սիրու ձգես, մի մատ-
նիլ ի խալխի լեզուն,
Սէր զնա գէմ խև արեր, դարձու-
ցեր է զէտ կապելուն.
Ով որ սիրոյ տէր մարդուն մեղա-
դբէ, ինքն է ատելուն:
Նահապես Քուչակ

1374

2355-2000

Սէլն Աստծու առաջին խօսքն
է, Նրա առաջին միտքը: Երբ նա ա-
սաց. եղիցի լոյս,— ծնւեց սէլը: Ինչ
որ Նա ստեղծեց, գեղեցիկ էր, ուս-
տի ոչինչ չվերաստեղծեց: Եւ սէ-
լը զարձաւ աշխարհի նախապատ-
ճառն ու թագուհին: Սակայն նրա
բոլոր ուղիները փուած են ծաղիկ-
ներով և ցողւած արիւնով, ծաղիկ-
ներով ու արիւնով...

Կնուս Համսուն

ՍՈՒԻՏԻՆ ԲԱԿԱՋԻՆՅ

I

Դեկտեմբերի երեսուն և մէկն էր։ Հոգեւոր դպրանոցի սան Սուրէն Բակունցն արձակուրդի առմաը գոնապանին ցոյց տւեց և փողոց դուրս եկաւ։ Նա մի բարձրահասակ, թխաղէմ պատանի էր։ Չոր սառնամանիքը կարմրացը եր էր նրա այտելը, բայց նրա երակներով մի հաճի ջերմութիւն էր հոսում, և նա մտաղրադ առաջ էր գնում լայն փողոցով։

Սուրէնը քայլում էր և ինչն իրան մտածում։ — Համեստ եղի՞ր։ Ա՛խ այդ անվերջ խրատները, որոնք և ձանձրալի են և անօգուտ։ Անցեալ տարւայ բարիկենդանին մի քիչ խմել էի. կեանքումը առաջին անգամն էր, դէ ուժ հետ չի պատահում, իսկ նա մոռանալ չի կարողանում, հազար ու մի ակնարկներով յիշեցնում է ու միալար կրկնում. համեստ եղի՞ր։ Ասելը զիւրին է, իսկ գարդից, հարցնել չկայ։ Փակել են վանդակում, ամիսը մի անգամ են դուրս թողնում, ան էլ ամեն անգամ գլխիս մի անհամ ճառ են ասում. քեզ լաւ պահիր, մի խմի, մի ծխի, պարկեշտ կաց, լաւ ընկերներ գտիր, մեծերին յարգիր... Զէ, պարոն վերակացնե, աշակերտի սիրաը չես հասկանալ... Որքան փորձւած ես, նոյնքան էլ միամիտ, քեզ խաբելն էլ դժւար չէ։ Հաւատացը ել եմ, թէ

Ազարեաններն իմ ազգականներն են, և քո զիւտուն զլուխը մի օք չի հարցնում, թէ ինչ աղպակցութիւն կարող է լինել Զանգեղուրի լինելում ընկած Ալեքի՝ իմ թշառ հօր և մեծ քաղաքի առաջին կարգի վաճառական հարուստ Արդուման Ազարեանի միջի: Պատկառանքով ստորագրում ես տոմսն ու ինձ յանձնում: Սակայն խարւած ես, արժանապատիւ վերակացու, հայրս մի ժամանակ Ազարեանների այգեպանն է եղել ահա մեր ամբողջ ազգակցութիւնը: Ճիշտ է, հայրս յաճախ հպարտանում է իր ազգանունով և ինձ հաւատացնում, թէ իր պապերը բէկ են եղել, բայց այդ խաւարով ծածկւած ծագումը ինձ չի միշտ արում, պարձենկոտ հօրս զբոյցը իմ ու Ազարեանների յարաբերութիւնը չի փոխում, իսկ ինձ համար այս աւելի կարենը է, քան այն, որ նախորդներս երկու դար առաջ կալւածներ ունեին Սիւնեաց աշխարհում, և նրանցից մէկն էլ զինւոր էր Դաւիթ Բէկի բանակում, մի բան, որին ես երբէք չեմ հաւատում: Բախտնաց, իրօք որ փառաւոր ազգանուն է, բարձրագոչ, սակայն ես դարձեալ Ազարեանների այգեպանի որդին եմ, և աշխարհում չկայ մի զօրութիւն, որ այս փաստն ի չիք դարձնի...

Սյդ մի ծանրակշիռ հանգամանք էր և Սուրէնին մտատանջութիւն էր պատճառում: Զայրոյթը նրա մէջ շիջաւ և փոխւեց մի վշտոտ տրամադրութեան: Ազարեանների հոյակապ տան առաջ նա կանգ առաւ: Երկար միրուքով շւեցարը գուոք քաղաքավարութեամբ բաց արեց և թագուած ժայիտը շրթին, զլուխ տւեց Սուրէնին:

Պատանու սիրտը խոցւեց, որովհետեւ նա լաւ էր հասկանում շւեցարի ժպտի իմաստը, դիտէր, որ զոան յատենում տամսնեակ տարբիներ կանգնած այդ մարդը հինգ մատի պէս է ձանաչում Ազարեանների տան յաճախորդներին, գիտէ նրանցից իւրաքանչիւրի ովլ լինելը և ամենքին իր ծագման, կարողութեան ու գիրքի համապատասխան ժպիտով է զլուխ տալիս մէկին ժպտում է լի պատկանքով, միւսին՝ սարկի շողոքորիժութեամբ, երրորդին՝ հեղանանքով... Այս բոլորը նա անում էր վարպետօրէն, շինծու քաղաքավարութեամբ, սակայն Սուրէնը նկատում էր նրա գէմքի թագնւած հեղանանքը և զսպում բանկւող զառնութիւնը:

Նա բարձրացաւ արևադարձային բայսերով զարգարւած սանգուզըով և դողդոջուն մատներով զանգահարեց: Դուռը բացւեց, և նա ներս մտաւ: Նրան դիմաւորեց փոքրիկ Վահանիկը՝ Արզուման Ազարեանի միակ տղան:

— Սուրէն, լաւ ես արել, որ շուտ ես եկել:

— Դեռ ոչոք չկայ:

— Արամայիսն է եկել, լուսիկի սենեակում իրար հետ խօսում են: Ծառը զարդարել ենք, շատ լաւն է, վրան ամեն ինչ կայ, մոմեր, ոսկէ թեկեր, կամֆէտով լիքը տոպրակներ, գնտակներ, ծայրին էլ մի աբե... Արամայիսն ինձ հետ չի խաղում, նա հա լուսիկի հետ է քչիչում: Դու ինձ հետ կը խաղամ, չէ՞ գէ, ասա, Սուրէն, կը խաղամ:

— Կը խաղամ,—պատասխանեց Սուրէնը, և նրան պատեց մի տխուը անհանգստութիւն: Զըդջաց, որ եկաւ Աւելի լաւ էր, դպրոցում նստէր ու մտածէր: Անվճառականութեան մէջ ընկաւ և մի վայրկեան մտածեց յետ դառնալ: Վահանիկը բըու-

նեց նրա ձեռքը և քաշեց: Սուրէնը մեքենայօրէն
հետեւ նրան: Նրանք մտան տօնածառի ընդար-
ձակ սենեակը:

Վահանիկը ոգեորւած ցոյց էր տալիս տօնա-
ծառի փայլուն զարդարանքները և իր հիացմուն-
քի բացագանչութիւններով սենեակը լցնում: Սու-
րէնը անուշաղիք նայում էր մատանշած իրերին
և չէր հասկանում մանկան խօսքերը, որովհետեւ
ուրիշ մտքով էր տարւած: Յանկարծ նա արագու-
թեամբ շուռ եկաւ, մօտեցաւ դիմացի դունը,
երկու անգամ շտապով ծեծեց և դուռը բաց արեց:

Արզուման Ազարեանի գուստը կուսիկը և զիմ-
նաղիոնի մի աշակերտ, վայելուչ հազնւած, նըս-
տած խօսում էին: Երբ գուռը բախնցին, օրիսրզը
վեր թռաւ տեղից և վագեց դէպի գուռը, իսկ տղան
պտտեց էլեքտրականութեան կոճակը և տեսնելով,
որ դեռ մութը չէ, իսկոյն լապտերները հանցըրեց:

—Մյդ զուբ էք, Սուրէն, եկէք,—ասաց կու-
սիկը և նայեց Արամայիսին: Այդպէս էր աշակերտի
անունը: Ինըը Սուրէնին չէր սպասում, պատանի
սեմինարիստն ամենին հետաքրքիր չէ, և եթէ
սիրալիր բարեց, այդ մի միան քաղաքավարու-
թեան համար էր, ուրիշ ոչինչ մյու էր տառմ
օրիորդի հայեացքն, իսկ Արամայիսն աշխատում
էր թափանցել նրա ձայնի ելիչ ջների մէջ, զննում
էր նրա հայեացքի նրբին խաղերը, որ իմանայ
կուսիկի ծածկամիտ հոգու գաղտնիքը:

—Բարե ձեզ,—ասաց Սուրէնը վարանումով,
—բարե, Արամայիս,—և նա բանեց հախ օրիորդի
ձեռքը, ապա մօտեցաւ Արամայիսին, որը կանգ-
նեց և սառը քաղաքավարութեամբ բարեկց նրան,

այն ինչ Սուրէնը երկու անգամ կոպտութեամիք
թափահարեց նրա ձեռքը:

Երեքն էլ լսեցին: Սուրէնը կանգնած պատու-
հանին էր նայում և անհանգստօրէն ոտքը կամա-
ցուկ և արագ խփում էր յատակին: Արամայիսը
նստեց բաղմոցի վրայ ու սֆինքսային կերպա-
րանք ստացաւ: Նրա հաստ ու գուրեկան քթա-
ծակերը լայնացել էին, մեծ-մեծ թուխ աչքերը,
կարծես, ճիգ էին թափում չշարժւել, սառչել և
ապակի կտրել, իսկ կուրծքը լցւում էր խեղզող
յորձանքներով, բայց նա արտաքին վայելչութեան
պաշտպան ու զուսպ տղայ էր: Կուսիկն սկզբում
կանգնած էր, տպա մօտեցաւ սեղանին և նստեց
պատուհանի զիմաց: Նա վերցրեց այլբում և սկսեց
թերթիկները շուռ տալ: Սենեակի անկիւնները
քիչ-քիչ սուզում էին մթութեան մէջ: Պատու-
հանից երեսում էր հեռաւոր սարի զագաթը՝ ներկ-
ւած ծիրանի-մանուշակագոյն ցոլքերով, որոնք
պատուհանի ապակիների վրայ շողշողալով ան-
դրագարձել էին դէպի օրիորդի ձւածե դէմքը, որ
սենեակի մութ ֆօնի վրայ գծագրում էր գրա-
ւիչ սպիտակութեամբ: Օրիորդը նկատում էր պա-
տանիների գողունի հայեացքները, հասկանում էր
նրանց և վախենում, որ կորցնեն իրենց հոգեկան
հաւասարակշուութիւնը: Նա վերջ տւեց լուռնեան
ու ասաց:

—Սուրէն, այս այլբում նոր եմ գնել, Արա-
մայիսին ցոյց եմ տել նկարները, եկէք ձեզ էլ
ցոյց տամ, տեսնենք, կը հաւանէք:

Եւ նա վառեց լապտերները և սկսեց մէկիկ-
մէկիկ շուռ տալ նկարները: Սուրէնը մօտեցաւ և

աչքերը սեհուց նկարներին: Օրիորդը մեկնարանում էր պատկերների իմաստով ու արեսափ առանձնայատկութիւնները: Նրա ձայնը թովից Սուրբէնին, որն այլ ևս չէր հասկանում նրա ասածները: Լուսիկի բացագանչութիւնները, իրեն սպիրտի այլող կաթիլներ, կաթիլ-կաթիլ թափուում էին նրա սրտի վրայ և գինովցնում: Մէկ էլ օրիորդը ձգեց այլբոմը, մօտեցաւ Արամայիսին և ասաց.

—Ի՞նչու լսեցիք, Արամայիս, խօսէք, զուք այնքան խելօք էք խօսում, որ ևս լսելուց չեմ յագենում, իսկ երբ լսում էք, ձեզնից վախենում եմ,

—Ո՞չ,—ասաց գիմնազիստը՝ իր զննող հայեցքը շեշտակի նետելով Լուսիկի դէմքին,—ես այնքան էլ խելօք չեմ. աւելի լաւ է, նկարները բանաք. ես զիտում էի, զուք և նետաքրքիր էիք և ուրախ:

Օրիորդը տարակուսանքով դէմքը շրջեց և Սուրբէնին նայեց: Վերջինս կանգնեց և մօտեցաւ միւսներին: Արամայիսը արհամարհական մի հայեցք նետեց Սուրբէնի վրայ: Դուռը բացւեց, աղախինը կանգնեց շէմքում և ասաց.

—Թէյլ պատրաստ է, ձեզ են սպասում:

Ճաշաբանում սեղանի գլխին նստած էր տիկին Ազարեանը: Սուրբէնը մօտեցաւ տիկնոջը և ժպտերես ու շառագունած բարեկեց նրան: Արամայիսը ընդունած քաղաքավարութեամբ բռնեց տանալիկնոջ աջն ու համբուրեց: Տիկինը նրանց նստեցրեց իր աջ ու ձախ կողքերին և սկսեց հիւրասիրել թէյով ու անուշեղէններով: Կէս ժամ չանցած՝ սեղանատունը լցւեց նորանոր հիւրերով,

գլխաւորապէս աշակերաներով ու աշակերտուհիներով: Լուսիկն զբաղւած էր նորեկներով. նստեցնում էր, խօսեցնում և հիւրասիրում:

Տիկին Ազարեանը հովանուորում էր Սուրբէնին: Նա էր գլխաւոր պատճառը, որ այգեպան Ալեքը որդուն հնուաւոր զիւղից քաղաք էր բերել և դպրոց տւել: Ժիր ու ուշիմ մանուկ էր Սուրբէնը, տիկնոջը գուր եկաւ, և նա սկսեց ուշադրութիւն գարձնել նրա վրայ. յաճախ իրենց տուն էր կանչում, ընծաներ էր տալիս, քաջալերում էր, օգնում:

Արամայիսը տիկնոջն էր զբաղեցնում, իսկ Սուրբէնը լուռ էր: Նրա գլխում ցցւած էր Արամայիսի պատկերն այն կերպարանքով, որ նա ունէր Լուսիկի սենեկակում, չար ու զայրացկոտ: Պարզ էր, որ ինքը գուրս էր գալիս Արամայիսի դէմ: Պայքարել թէ սուս ու փուս հետանալ ասպարիզից: Անհաւասար ուժեր են: Ես ուր, հարուստ ու զիրքով Մեսրոպ Ղարաբեանի որդին ուր: Աստւած զիտէ, թէ ինչ է սպասում ինձ, իսկ նրա ապագան որոշ է ու փառաւոր: Բայց աշխարհ է, ովք զիտի, քիչ անակնկաներ են պատահում, երբեմն թոյլը հերոս է կարում, միթէ մենակ փողն է ոյժը...

Լուսիկը մօտեցաւ Արամայիսին և ասաց.

—Յոյս ունեմ, որ մայրիկը ձեզ խերի, ինչո՞ւ այնպիսի տարօրինակ խօսքեր ասացիք:

Օրիորդի աչքերն այնքան հանգիստ ու կախարդող դէմքն այնքան խաղաղ, որ նրա հարցի անկեղծութիւնը կասկածանքի ենթարկելը դժւար էր: Արամայիսը պատասխանեց:

— Ես յանցանքս քաւելուց չեմ խռոսափի,
բայց...

— Ի՞նչ բայց, շարունակէք:

— Բայց չ^թոր զուք ինձ ծաղրում էիք:

— Ամենին, ես անկեղծ ասացի, իրօք զուք
երբեմն շատ խելօք էք խօսում, և վերջապէս կա-
րող էի և կատակ անել, մենք ընկերներ ենք,
նոյնը, ինչ որ առաջ, երբ տափկնոցի էինք խա-
ղում պարտիգում:

— Սուրէնն էլ նոյն է:

— Անշնչաղ, ինչ տարօրինակ հարց էք տալիս:

— Թւում է, թէ նա փոխւել է:

— Այն, մի քիչ փոխւել է. առաջ նու մեղնից
քաշում էր. յիշմամ էք, երբ զնում էինք այդին,
նա փախչում էր և թագնում թմբերում, իսկ
նրա հայրը կրկնում էր. նա ծառայի տղայ է,
նրան ինչ կը սագի խաղալ ձեզ հետ. Այժմ նա
այլս չի փախչում, նստում է մօտներս և շնորհ-
քով զբոյց անում:

Լուսիկը հեռացաւ, մտաւ միւս սենեակը:

Դու իմ ես, մտածում էր Արամայիսը, իմը,
և ոչնք չի համարձակւիլ քեզ մօտենալ: Նրա դէմ-
քը և զայրոյթ և վճռականութիւն էր արտայայ-
տում: Իսկ Սուրէնն ասում էր իր մտքումը. ես
նրան սիրում եմ, սիրում եմ նրա կարմիր շըր-
թունքները, որոնք կրկնում են. Եկ և համբուրի:
Բայց միթէ ես կարող եմ նրան համբուրել, այդ
հնարաւո՞ր է: Իհարկէ ոչ, ես նոյնիսկ մտածելու
իրաւունք չունեմ, որովհետեւ ես մի խեղճ այգե-
պանի որդի եմ, իսկ նա հարուստ վաճառականի...
Ես չկամ այստեղ, իմ գոյութիւնը մոռացել է և

միայն Արամայիսի հետ է խօսում... Գուցէ նրա
հետ է խօսում, բայց սրտով ինձ հետ է, նրա հետ
խօսում է, իմ մասին մտածում... Աշխարհում ա-
մեն բան կարող է լինել, հրաշքներ էլ են պա-
տահում...

Դահլիճի դուռը բացւեց, լավտերները վայր-
կենապէս վառւեցին, և հիւրերը սեղանատնից
դահլիճ մտան: Տօնածառը՝ հազարնազուկ հարսի
պէս, իր փայլուն պերճանքներով, իր անթիւ ու
բազմերանդ մոմերով, լոյս էր սփոռում իր շուրջը:
Ուկէ անձրև եկաւ: Նախշուն թիթեռնիկներն ու
կալմիր զատիկները պար էին բռնել ծառի ճիւ-
ղերի մեջ: Հրեշտակները մրգալի տոպրակներ էին
մեկնում փոքրիկներին, իսկ ծառի կատարին պըլ-
պլում էր արել և մանուկներին նետում երազ-
ների ծովը...

Երեկոյթն սկսւեց: Մանուշակապսակ գա-
րունը, բողբօջներով ողնուած, եկաւ ու երգեց.
խոպակները հասկերով պսակած ամառը ժպտաց
ամենքին. աշունը, ողկոյզներով բերնաւորւած,
թախիծը շրթին, կարմիր ու դեղին զգեստներ հա-
գած, միրգ բաժանեց. ապա եկաւ ձմեռը, սպի-
տակ, ալեղարդ. ցուրտ էր, սառնամանի, ամբողջ
զալլիճում ձիւն էր գալիս. տօնածառը ձերմակ
հագաւ...

Փոքրիկները զւարձանում էին, Վահանսիկը
վազվզում էր, քաշըշում, Լուսիկը զեկավարում էր
նրանց, կարգագրութիւններ անում: Արամայիսն
զբաղեցնում էր օրիորդներին և հեռւից նայում
Լուսիկին ու զայրանում մանուկների վրայ, որոնք

զբաղեցնում էին օրիորդին և զրկում իրեն մօտ նստելու հասարաւորութիւնից: Սուրէնը քաշւել էր մի անկիւն և մտածում էր: Հասակաւորները նայում էին այդ մտադի հասարակութեանը և հայեցքներով քաջալերում նրանց:

Կլոր պար բռնեցին ծառի շուրջը: Արաւմայիսը բռնեց կուսիկի թերը: Եւ հնչում էր դաշնամուրի ներդաշնակ նւազը, և շարժում էին պարողները համաշափ քայլերով, և պարն ստանում էր հաճելի գրաւչութիւն: Վառում էին պատանիների այսերը, իսկ օրիորդները նազանի շարժումներով կախարդում: Էին նրանց:

— Սուրէն, ինչո՞ւ էք կանգնել անկիւնում, կանգնել ու լոել, եկէք, պարէք, ձանձրանալու ժամանակ չէ,—ասաց կուսիկը և, նրա ձեռքից բռնելով, մտցրեց շարքի մէջ:

Կուսիկը պարում էր երկու պատանիների միջև: Սուրէնը կարմրել էր. նրա դէմքը մէկ այրւում էր, մէկ ստոռում, իսկ ջղերը ցնցուում էին: Օրիորդից մի հարբեցնող բուրմունք էր սփռում, ցոյում պատանիների զգայուն կաշին և նրանց իսպառ իւնիթացնում: Ում համար էր պարում կուսիկը, չփիտէին, չէին հասկանում, և կասկածն ուռմանում էր նրանց հոգում: Անփոք խանդր կրծում էր նրանց սիրալ, իսկ զայրոյթը փրփրում էր և ձգտում դուրս ժայթքել: Ում հետ էինձ կշռի միւնոյն նժարի վրայ դնում, բորբարւում էր Արամայիսը. իս միայն երազել կարող եմ, մրմիջում էր Սուրէնը...

Անցաւ երկու տարի: Հանգիստ ու երջանիկ չէր Սուրէն Բակոնցը: Երբ երեկոները խաւարը թուխս էր նստում լեռների վրայ և իր տակ ծածկում հակայական քաջարը, Սուրէնը սուզուում էր մտքերի մէջ և ման գալիս գվրոցի երկար միջանցքներում: Նրա դէմքը դժգոյն ու վշտոտ տեսք էր ընդունում կիսախաւար միջանցքում: Անուրջները պաշարում էին նրան, և նա մտքով թռչում էր Աղարեանների տունը, կուսիկի մօտ: Օրիորդի պատկերը դառնում էր նրա երազների աղքիւրը: Նրա անփոք, մատաղ սիրալ քնքօրէն գողում էր՝ ինչպէս լեռան զեփիւից տատանուող տերեւ: Երբեմն նրան համակում էր մի ինչ որ անհանգստութիւն: Նա ուզում էր փախչել գվրոցից, գնալ հեռու, վազել անտառի սառը քամիների մէջ և զովանալ լճափին: Բայց երկաթէ դարպան ամուր փակւած էր կուռ կողպէքով և խուլ ու անողոք գննապաննը վերակացուի հրամանազիրն էր պահանջում:

Սուրէնը թափառում էր պարտիզում, ձմրան ձիւների մէջ և դազրած վերադառնում էր սերտարան, փորձում կարգալ, լայց աչքերը սահում էին տողերի վրայով, կարգացած չէր ըմբռնում, իսկ միարբ սաւանում էր ուրիշ տեղերում: Երեկոյեան ազօթքից յետոյ գնում էր ննջարան, բայց քունը երկար ժամանակ մօտ չէր գալիս նրա աչքերին, երեկայութիւնը նորանոր հորիդոններ էր նկարում նրա առաջ և մոլորեցնում

նրան իր ցանցերում։ Տիրութիւնը յափշտակում
էր նրան, և նա գլուխը թաղնում էր վերմակի
տակ և հեկեկանքով մտածում։ Ինչ լաւ կը լինէր,
եթէ մնար իրենց գիւղում, խաղար փողոցում,
աշխատէր այգում, գոմը գնար, հորթուկներին
խոտ տար. վարել կը սովորէր; ցանքս անել. եզ-
ների հետ արտը կը գնար, արտուտի հետ տաղ
կամէր և տուն կը գանձար ուրախ ու անհոգ։ Այն
ժամանակ չէր պատահի Ազարեաններին, չէր տես-
նի Լուսիկին և չէր իմանայ, թէ այգեպանի որ-
դու համար ինչ տանջանք է հարուտի աղջկայ
վրայ սիրահարւելը… Ծերունի գիշերապահը զգոյշ
քայլերով անցնում էր մահճականների արանքով,
նկատում էր Սուրբնի անհանգիստ շարժումները,
մօտենում էր և զգուշութեամբ կռանալով ասում.
Բակունց, ինչդ է ցաւում—Ռինչ չի ցաւում,—
պատասխանում էր նա:—Քնիր, քնիր, —կը կնում
էր ծերուկը և նոյն ձեռվ շարունակում քայլել:
Նրա զգոյշ ու համաչափ ոտնաձայները քիչ-քիչ
փոխում էին մեղմիկ նանիկի և Սուրբնին դէպի
քուն տանում։

Երեիմ Ազարեանները նրան իրենց տուն
էին կանչում։ Երբ նա Լուսիկին ուրիշ տղայի,
մահաւանդ Արամայիսի հետ էր գտնում, ամպե-
րը դիզում էին նրա սրտի վրայ, լեզուն կապ
էր ընկնում և մտքերը թռչում գլխից։ Երբ մե-
նակ էին լինում, նա նստում էր Լուսիկի կողքին,
իսկ լեզւի կապերն արձակում էին։ Սուրբնը
խօսում էր զգացւած ու վարակիչ։ Լուսիկը ըն-
տիր բանաստեղծութիւններ էր կարգում։ Սուրբնը
բացատրում էր դժւար կտորները և մեկնում

գրւածքի գլխաւոր միտքը։ Նա խօսելիս յա-
փշտակում էր, ոգեսորւում, իսկ նրա ձայնը մերթ
քնչանում էր, մերթ առնական գրաւչութեամբ
խրոխտանում։ Խօսքերը թափւում էին նրա քե-
րանից կլկլան աղբիւրի պէս և յորդանում լեռ-
նային վտակի նման, իսկ աչքերի մէջ մի փայ-
լուն ու անմեկին կրակ էր առկայցնում։ Օրիորդի
այտերը շառագունում էին, և նա կամ գլուխն
էր քարշ ձգում, կամ մօտենում էր լուսամուտին
ու նայում լեռներին, որոնք մարդու հոգին վեր
քաշելու աննման զօրութիւն ունեն։

Մի օր Լուսիկն ասաց.

—Սուրբն, երբ դպրոցն աւարտէր, գնալու
էք շարունակելու։

—Գնալու եմ, այն, ես կամենում եմ միշտ նո-
րանոր բաներ սովորել։ Սակայն կարող է պա-
տահել, որ չգնամ, զուցէ այդ ինձ չաջողութիւնը՝ կը ց-
կտուր պատասխանեց տղան։

—Մայրիկս ասում է, որ գուք նշանաւոր
մարդ կը գառնաք. աշխատէք, որ գնաք համալ-
արան, այդ ես շատ եմ ցանկանում։

Սուրբնը լոեց։ Կրկին յուսոյ մի շող ծնւեց
նրա հոգում։ Հարստութիւնը մի խոր փոս էր
փորել նրա և Ազարեանների մէջ, և նա կարծում
էր, որ այդ փոսը լցնելու հնարաւորութիւն չկայ։
Այդ կարելի էր անել համալսարան գնալով, այս
էր ուզում ասել Լուսիկը։ Սուրբնը նւիրւեց դա-
սերին։ Սէրը նրա հոգում մի չահ էր վասել, որ
լուսաւորում էր նրա ուղին։ Աւարտական քըն-
նութիւնները չափազանց յաջող անցան։ Հնգերի
մի շարք կար վկայականում։

Մի ծաղկաշաղախ առաւօտ էր, երբ Սուբէնը վերջն քննութիւնը տևեց: Պարտիզում թըռչունները հանդիսաւոր համերգ ունէին, տերեւներն էլ ունկնդրում էին նրանց՝ ճիւղերի բարձունքներից: Սուբէնը զունատել էր ու նիհարել: Մի ծանր բեռ ընկաւ նրա ուսերից, և նա մի հսկայական քայլ մօտեցաւ Ազարեաններին: Նա մտաւ պարտէզը, ծաղիկներ քաղեց՝ կարմիր ու սպիտակ վարդեր, քնքոյշ յասմիկներ, կապտաչեայ անմոռնուկներ և բուրաւէտ միխակներ, քաղեց՝ փունջ կապեց և փողոց գուրս եկաւ:

Լուսիկը մենակ էր, երբ նա եկաւ Աղաւրեանների տունը:

— Շնորհակալ եմ, ի՞նչ հրաշալի ծաղիկներ են. ես յասմիկ շատ եմ սիրում, նրա հոտը հարթեցնում է ինձ. նոյնիսկ անմոռնուկ, — տաց օրիորդը աննշմարելի ժպիտով, ապա փունջը խանգաղատանքով մօտեցրեց իր դէմքին ու մտածեց:

— Այսօր քննութիւններս վերջացան:

— Իսկապէս, ի՞նչպէս անցան:

— Լաւ, — զսպւած հրճանքով պատասխանեց Սուբէնը:

Լուսիկուն:

— Ի՞նչ եղաւ ստիպենդիայի խնդիրը:

— Դեռ յայտնի չէ, ընտրութիւնը յիտաձգւած է:

— Դուք, ի՞նարկէ, յոյս ունէք:

— Առանց յոյսի մարդու սիրալը կը ճաքի:

Լուսիկուն:

— Իսկ եթէ չաջուի, ի՞նչ կանէք, Սուբէն:

— Ուսուցիչ կը դառնամ:

Եւ լուսիկի առաջ պատկերացաւ ստորին գլուցի ուսուցիչը՝ վախ ու գունատ, անձաշակ հագուստով, տղեղ կօշկներով, խոնացած զըլ-խարկով ու երկար մազերով... Իսկ Սուբէնը մտածում էր, այս ժամանակ մնաք բարեկ, երաղներ: Պատուհանից ներս էին թափւել արևի ձառագայթները, որոնք ոսկէ շողերով երջանկացնող ու հարեցնող եթեր էին սրոկում սենեակում: Երազանք: Զբունում է պարտիզում: Երեկոյ է, հրավառութիւն կայ: Ծառերը գիւթական հեքիաթ են հիւսում: Քայլում է, քայլում և պատահում է Լուսիկին, գլխարկը հանում է և բարեկում: Բարե ձեզ, ասում է օրիորդը ու աւելացնում, մայրիկս ասում է, որ գուք նշանաւոր մարդ կը դառնաք, միայն թէ պիտի շարունակելու գնաք, ուսուցիչ չպիտի գառնաք: Մեկնում է իր ձեռքը, որ օրիորդի աջը բննի, բայց բոլոր ճրագներն իսկոյն մարում են, և խաւարը քարշ է անում իր սկ վարագոյրնելը

III

Սուբէնը գնաց իրենց գիւղը: Նրա աղքատ ու ծերացած ծնողները շատ ուրախացան: Մայրը նրան կրծքին սեղմեց և այտերն ու աչքերը համբուրեց: Հայրը նրան էր նայում և հրձանքով կրկնում: Վառք քեզ, Աստած, մեզ էլ ու բիշների շարքը ցցեցիր: Սուբէնը գնում էր իրենց այզին և նայում էր հօրը, երբ սա քրտնաթոր աշխատում էր: Նա պտտում էր գիւղի շրջակայ-

քը, ազգիւրն էր գնում, գետում լողանում և պակում ձորի խորքում, ականջ դնում ջրի խըշշոցին ու թռչնիկների ծլվոցին: Երեկոները նըստում էր ձորի գլխին, ժայռերի վրայ ու տառերը հաշում: Նրա բոլոր մտքերը լուսիկի շուրջն էին ճախրում: Եթէ Լուսիկն այստեղ լինէր, կը գնայինք ազգիւրը լւացւելու, ձորը կիջնէինք և կը նայէի նրա աչքներին: Երբ այզը բացւէր, թռչուններն սկսէին իրենց մեղքիները, կերթայինք ծաղիկ քաղելու, ևս վարդ կը գանէի և զանգակիկների նման հովտաշուշան և կը տայի նրան, որ հոռոտէր ու գինովնար. անմոռուկ կը տայի, որ ինձ միշտ յիշէր...

Երեկոները մայրը Սուրէնի համար թէյ էր պատրաստում: Ամբողջ ինն ամիս միրդ ու անուշեղէն էր պահել որդու համար: Կեր, աչքի լոյստ կեր, արևիկ մեռնէմ, կրկնում էր նրա նիհար ու գունատ մայրը: Հայրը նստում էր փոքրիկ լամպարի առջև և հարցեր էր տալիս Սուրէնին մեծմեծ քաղաքների, մութ աշխարհների ու խոր երկրների մասին: Ասում են՝ տաներկու խաչտպաշտ թագաւորներ գալու են սուլթանի վրայ, որ հային ազատեն: կաթողիկոսն է զիր ստացել նրանցից: Ռուսաց զօրքի առջերից Լուսաւորչի պատկերն են տանում, և մեր սուրբ պապը իր մատով անօրէնների աչքը հանում է, որ չգանքիստոնիաների վրայ: Էջմիածնից մարդ է գնացել ֆրանգների թագաւորի մօտ, որ զօրք բերի, Անին շէն անի...

Եւ Սուրէնը համբերութեամբ լսում էր հօր խօսքերը, պատասխանում էր սիրով ու բաւա-

կանութեամբ, բացատրում էր զգուշութեամբ, որ չխախտի ծերունու հաւատը, չվերաւորի նրա զգացմունքները: Հայրը որդուն լսում էր ուշադրութեամբ ու հաճոյքով և լցում շոյով նըստառութեամբ, որ այդպիսի խելօք տղայ ունի ինքը: Երբ պատկում էին քնելու, մայրը երեք անգամ մատներով խաչ էր քաշում Սուրէնի անսպամ մատներով խաչ էր քաշում Սուրէնի անսպամ մատներով խաչ էր գանձում, կողնի վրայ, Տիրամօրն օգնութեան էր կանչում, տպա համբուրում որդուն և ճրագլ մարում:

Սուրէնին մերժեցին, ստիպնագիան ուրիշի տիին: Աշխարհում արքանաւորութիւնները չեն մարզուն բախտաւորիցնում: Մանաք բարե, անուլ չներ: Հայրը համոզում էր, որ նա նամակ զրի տիկին Ազարեանին, իր կողմից էլ բարե յիշի ու խնդրի, որ տիկինն իր քաղցր ուշադրութիւնից չզրկի նրան: Սուրէնը հօրը չսեց: Նա շրջում էր այգիներում, հստում կամուբէի տակին և ջրի հոսանքին նայում, մանում էր անձաւները և զըննում նրանց մթին խորշերը: Այրերի խորքերից խորհրդաւոր ու գաղանի ձայներ էին գալիս: Նա քնում էր անհանգիստ և խոր հառաջանքներ էր քնում էր անհանգիստ և առաջանայի նրա երեսին նայում: Նա և անթարթ աչքերով նրա երեսին նայում: Նա մնաց գիւղում, ուսուցիչ զարձաւ: Ամիսները գըլը լորում էին և տարին բոլորում, իսկ Սուրէնը հալւում էր կարօտից: Լուսիկից տեղեկութիւն չունէր: Նրա միակ միխթարութիւնը ծնողներն էին: Երբ իր ամսականն ստանում էր, վազում էր տուն և զրամը տալիս նրանց, որոնք զողոզաւով վերցնում էին փողը, ուրախանում, օրնում

նրա արել և թագանում դրամը: Նրանց երջանիկ դէմքերին նայելիս՝ Սուրէնը բաւականութիւն էր ստանում: Երբեմն էլ նա փոքրիկ բանաստեղծութիւններ էր զբում: Նա երգով էր յասմիկի բուրմունքը և նրանով հարբեցող աղջկայ աչքերը...

IV

Շեփորուկը մի քանի անգամ ծաղկեց և այդինքը լցրեց բուրմունքով, գետերը մի քանի անգամ յօրդացան ու նւազեցին, լիռներն իրենց սպիտակ սաւանը մի քանի անգամ կանաչով փխնցին, և կռունկները շարան-շարան սարերը հով դնացին ու գարձան: Եւ այդքան ժամանակ Սուրէն Բակունցը ապրում էր գիւղի խաղաղ անկիւնում: Մի գարուն էլ եկաւ, և վարդի ու շուշանի հետ Սուրէնը քաղաք վերադառնու:

Փողոցները լիքն էին մարդկանցով: Մեծ քաղաքի գւարձասէր հասարակութիւնը զուրս էր եկել՝ իր հաճոյաշարժ մարմինը զարնան կենարար արեի տակ ջերմացնելու: Կանալը իրենց մոդերն հագուստներով ի ցոյց էին հանել իրենց մարմնի հեթանոսական հրապոյրները: Սուրէնը մտաւ ամբոխի մէջ: Գեղեցիկ կանայք նորոգեցին նրա ցաւերը: Նա կանդ առաւ ծաղկեվաճառի խաշնութիւ առաջ և մի փունջ հովտաշուշան գնեց: Ահա և Արամայիս Վարագեանը: Զճանաչեց: Շատ տարիներ են անցել: Նա մեծացել, դեղեցիկ տղամարդ է դարձել: Հարուստ, կրթւած ու դիրքով: Իսկ Լուսինը. նա մոռացած կը լինի: Այն օրերից յետոյ լիններում շատ եղնիկներ են մեռել: Մատածում էր ու քայլում: Ահա և Ազարեանների տունը: Շփոթւած մատներով սեղմեց դանդի

կոճակը: Դուռը բացւեց: Ինքը կուսիկն էր կանգնած դռան յետում:

— Ա՛, բարեւ, Սուրէն, հազիւ հազ:

Սուրէնը բռնեց նրա ցնցւող բազուկը:

— Բարեւ, — շնչաց Սուրէնը շառագունած ու շփոթւած: Ներս մտան և անցան օրիորդի սենեալը, որի պաստառներն ու կարասիները երկնագոյն էին: Այդ նրա նախկին սենեակն էր, և պատուհանից կրկին երկում էին հինաւուրց գաղաթ-ները՝ ձիւնածածկ ու սլացող:

— Ո՞րտեղ էիք, Սուրէն:

— Գիւղումն էի, վաղուց է, որ ես քաղաք չեմ եկել:

— Այս, մոռացել էր, թէկ խոստացել էիք չմոռանալ:

— Ո՞չ, չեմ մոռացել և երբէք ձեղ չեմ մոռանայ:

— Ա՞յս, Աստած իմ, քանի տարի է իրար չենք տեսել, — ասաց օրիորդն ու շուռ եկաւ դէպի պատուհանը:

— Մէկ թւում է, որ վաղուց, շատ վաղուց է, որ մենք բաժանւել ենք, մէկ էլ կարծում եմ, որ այդ երեկ էր. սակայն ես ձեղ միշտ տեսնում էի, երազում:

— Երազում, հա, դուք բանաստեղծ էք, մայրիկս ասում է, որ ոտանաւորներ էք գրում: Ի՞նչ էիք անում այսքան ժամանակ:

— Ռւսոցիչ էի. երբեմն էլ զբում էի, բայց աւելի շատ մտածում էի:

— Մտածում էիք, ինչի մասին: Դեռ Սուրէնը չէր պատասխանել, դուռը բա-

խեցին։ Ներս մտաւ տիկին Աղաբետնը։

— Այս ում եմ տեսնում։ բարե Սուրէն, ինչ սիրուն տղամարդ ես դարձել, բայց մեզ մոռացել ես, մի նամակ անդամ չես գրել մինչեւ այսօր։

— Ո՞չ, տիկին, ես ձեզ չեմ մոռացել։

Տիկին Աղաբետնը նստեց բազմոցի վրայ։ Նրա երեսին արդէն խորշոններ կային, և մաղերի մէջ սպիտակ երիգներ էին փայլում։ Նա ուշագրութեամբ նայեց աղջկանը, ապա դիմելով Բակունցին՝ ասաց։

— Այսօր կը մնաս մեզ մօտ ձաշի, իսկ երեկոյեան միասին կը գնանք թատրոն։

— Շնորհակալ եմ, տիկին, գործ ունեմ, ինձ համար սենեակ պիտի գանեմ…

— Այդ վաղը կանես, իսկ այսօր մեր հիւրն ես, ինչ կանես, լուսիկ։

— Ե՞ս էլ եմ խնդրում, —պատասխանեց օրիորդը և այնպիսի հայեացըով նայեց Բակունցին, որ վերջինս դիմագրել չկարողացաւ և համաձայնեց։

Երջանկութեան մի ամբողջ օր էր այդ։ Օգը լիքն էր հաճելի բուրմունքով, և Սուրէնը շնչում էր խորին բաւականութեամբ։ Նրա մէջ արթնանում էին մանկութեան անուշ յուշերը, որոնք բորբոքում էին նրա սրտի հուրը և ծրաբում մերամաղձու յոյզերով։ Ճաշի ժամանակ ամբողջ ընտանիքը բոլորեց սեղանի շուրջը։ Արգուման Աղաբետնը նոյնն էր, իսկ Վահանը մեծացել էր, մի բարձրահասակ, նիհար ու կրակոտ պատանի էր։

— Այսօր ամենքը Սրամայիս Վարագեանի

մտախն են խօսում, —սկսեց ընտանիքի հայրը, — վաստաբան չէ, այլ հրաշք, այնպէս սեղմեց պրոկուրորին, որ տեղ չմնաց։ Կեցցէ նա, քաղաքն օգտւեց կէս միլլիոն, այս գատարկ բառ չէ. կէս միլլիոն մի անգամից, արձան պիտի կանգնեցնել։

— Հասարակութիւնը դժգոհ էր, թէ Վարագեանն անփորձ է, կը տարւի Այժմ ամենքի ըերանը կը փակւի, —ասաց տիկինը ուրախութեամբ։

— Այսօրւանից նա մեր քաղաքի առաջնակարգ վաստաբաններից մէկն է, մի քանի տարի էր, և նա առաջինը կը գառնայ, բոլոր նշանները կան, խելօք է, լուրջ, ուղիղ ճամբու վրայ է կանգնած։ —աւելացրեց ամուսինը և աչքի տակով նայեց Լուսիկին։

Օրիորդը ոչինչ չասաց. մտածում էր, իսկ Սուրէնի կրծքի տակ բարձրացաւ մի կրծող ալիք։ Երջանիկ օրը վիշացաւ։ Ճաշից յետոյ օրիորդն առաւ Սուրէնին և պարտէղ իջաւ։ Նրանը երկար զրուցում էին։ Երեկոյեան, թէյը խմեցին օրիորդի սենեակում, երկուսով։ Լուսիկը պատմում էր արտասահմանի մասին և այնտեղից բերած ընտիրնկարներն ու արձանիկներն էր ցոյց տալիս։ Սուրէնը լսում էր յափշտակութեամբ և աղօթում։ որ ժամանակը չը հոսի, կանգ առնի։ Ժամը ութին նստած էին բնուարի շքեղ օթեակում։

Ներկայացնում էին Ռոմէօ և Զուլիէտա, թատրոնը լիքն էր ընտիր հասարակութեամբ։ Դիւթական մթնոլորդ էր տիրում։ Սուրէնը բեմին չէր նայում։ Մթնումը լուսիկը գինովցնող ջերմութիւն էր տարածում։ Առաջին և երկրորդ գործողութիւններն անցան հանդիսատեսների լար-

ւած ուշազրութեամբ և վերջացան ըռունն ովացիաներով: Երկրորդ միջոցին օթեակը մտաւ Արամայիս Վարագեանը՝ հազած ընտիր ու ձաշակով զգեսաներ, մաղերը փայլուն օծած ու ձեռքին մի փունջ սպիտակ ու կարմիր վարդեր: Նա համբուրեց տիկնոջ ձեռքը և վարդը մեկնեց օրիորդին: Տիկինը նրան ծանօթացաց Սուրէնի հետ և յիշեցրեց, թէ ով է: Վարագեանը քաղաքավարութեամբ թոթւեց Սուրէնի ձեռքը և իսկոյն ուշադրութիւնը դէպի օրիորդը դարձրեց: Օրիորդը չէր խօսում, իսկ տիկինը իր ամբողջ էութեամբ տարւած էր երիտասարդ փաստաբանով: Սուրէնը լուռ էր, նա չկար, նրան ամինքը մոռացել էին, նոյնիսկ լուսիկը նրան չէր նայում, այլ հայիացքն ուղղել էր դէպի մի անորոշ կէտ: Լապտերները մարեցին, ներկայացումը վերսկսեց, իսկ Վարագեանը մնաց նրանց օթեակում: Սուրէնին թըւում էր, թէ իրեն խեղդում էն, թէ իր կրծքից դուրս են քաշում այն բոլորը, ինչ որ հաճելի է ու քաղցր: Նրան պատեց մի յուղիչ անհանգստութիւն: Մէկ էր առանց մի խօսք ասելու, գուրսեկաւ օթեակից և դէպի փողոց դիմեց: Երկարժամեր թափառում էր: Գնում էր մինչև փողոցի ծայրը, ապա դառնում և կանգնում թատրոնի առաջ: Կառքերը շարքով շարւած էին փողոցում, նրանց գոյնզգոյն լապտերները խորհրդաւորութիւն էին տալիս զիշերւայ խաւարին: Սուրէնն անցնում էր ու մտածում այն մասին, թէ լուսիկը նստած է Վարագեանի կողքին և ժպտում է նրան ու հոտոտում կարմիր վարդերը, անկասկած կարմիրները և ոչ սպիտակները: Սակայն

նա յասմիկի հոտով է հարբում միայն... Ներկայացումը վերջացաւ: Հասարակութիւնը գուրս թափւեց տենդոս փութկոտութեամբ: Փողոցը լցւեց մարդկանց ու կառքերի աղմուկով: Սուրէնը նկատեց Ազարեանների կառքը: Վարագեանն օգնում էր տիկնոջը, որ կառքը բարձրանայ: Լուսիկը մտածուր երեաց նրան, նրանք անյայտացան: Քիչ-քիչ փողոցները գատարկւեցին ու խաղաղւեցին, իսկ Սուրէնը դեռ թափառում էր: Քաղաքային այգու մօտ կանգնեց ու բարձր սուրեց: Սուլոցի թթիւնները տարածւեցին ու մարեցին ծառերի սաղարթներում: Գլխաւոր հրապարակում մօտեցաւ քաղաքավահին ու հարցրեց, թէ ժամը քանիսն է: Պատասխան ստացաւ, թէ երկուսն է: Նա հանեց իր ժամացոյցը, մօտեցաւ փողոցի լապտերին ու նայեց: Ճիշտ է, երկուսն էր: Շարունակեց իր պատունները և յանկարծ նըկատեց, որ կանգնած է Ազարեանների գրան առաջ: Առանց մտածելու՝ ձեռքը բարձրացրեց ու զանգանարեց, ապա, զանգի ձայնից սթափւելով, շուռ եկաւ ու շտապեց հեռանալ...

V

Սուրէն Բակունցն արդէն երիտասարդ բանաստեղծի անուն ունէր, և զրական որոշ շրջանակը ներում նրան ուրախութեամբ էին ընդունում: Հասարակութիւնից նո խոյս էր տալիս: Դրովների ընկերութեան նիստերին նո քաշում էր մի անկիւն ու լուս: Երբեմն միայն ամաչկոտութեամբ մատ էր բարձրացնում և զգուշութեամբ մասնաւ

կցում վիճարանութիւններին։ Խօսելիս նա ոգեհորւում էր ու յուզուում։ Նրա ձայնը դուրեկան էր ու երաժշտական, խօսքը՝ հնչուն և մաքերը խելօք, ուստի նրան ուշադրութեամբ էին ականջ գնում։ Նրան գովում էին, և նա, քաջալերւելով, իր ապագայի համար գեղեցիկ ծրագիրներ էր կաղմում, ծրագիրներ, որոնք արագութեամբ քանդուում էին, որովհետեւ երևակայութիւնը փորփում էր և նորանոր հեռանկարներ բաց անում նրա առաջ։

Սուրենը յաճախ փողի կարիք էր զգում։ Աշխատած նրան չէր բաւականացնում, և տարին վերջանում էր պարտքերով։ Տնտեսութեան մասն հասկացողութիւն չունէր։ Նա գնում էր բոլոր հասարաւական վայրերը՝ թատրոն, կինոմուսուքափ, տկումբ։ Հեռանում էր քաղաքից, մասնում շրջակայ գիւղերը, բարձրանում լեռներն ու թափառում անտառներում։ Ամենից շատ սիրում էր նոր գրքեր գնել ու գեղեցիկ կաղմերով զարդարել։ Նա կարդում էր բոլոր նորագոյն երկերը։ Գիշարւեստական հաճոյըը նրա ամենաներական զգացմունքն էր, նրա կեանքի բովանդակութիւնը։ Յափշտակւում էր յատկապէս բանաստեղծութեամբ ու ճարտարապետութեամբ։ Ոչինչ այնպէս չի գնում մարդու հոգին, ինչպէս՝ բանաստեղծութիւնը, և ոչինչ այնպէս միզ չի մօտեցնում երկնքին, ինչպէս միզ չի մօտեցնում էր ժայռերի վրայ և իր հովական երգն ու սուլոցը ներքն ուղղում։ Նա ինքը մի ժայռի կտոր էր, և նրա կրծքից դուրս եկող սուլոցը որոտում էր կայծակի ուժով, իսկ իսկ անձաւները հտափակ կրկնում էին։ Ոչխարները հասկանում էին նրա երգի ամեն մի բառը, նրա ձայնի ամեն մի ելեկջը ու շարժում հնազանդ նրան։ Հեռու կատարից բարձրանում էր արծիւը և թեկերը լայնօրէն փռած ճախրում վճիտ եթերում։ Սակայն ոչոք և ոչինչ չէր կարող մօտենալ նրա հօտին, աւազակ լինէր նա, թէ զայլ արիւնարու, արծիւ լինէր նա, թէ արջ ամենի, այդ միւնոյն էր, հրացանը կորոտար և գնդակը շեշտակի կը միւէր նրա կրծքին։

Ինչպէս արեն աշնան օրերին, կրկնում էր նա, և իրօք՝ վաղանցուկ գոյների խորհրդաւոր ու թըլթըլուուն հրդեհը, որ ներգաշնակօրէն գիզանում է արեամուտին, բորբոքում էր նրա սրառում թագնըւած թափիծը։ Այդպիսի ժամերին նա նւիրւում էր ստեղծագործութեան։

— Մեզնից շատ ու շատ տարիներ առաջ, հեռաւոր լեռներում ապրում էր մի հովիւ։ Պատանի էր նա, և աղևամազը հազիւ էր մըռտում վերին շրթունքը։ Ամեն առաւօտ քշում էր նա իր հօտը գէպի խոտաւէտ սարերը։ Ծաղիկները, արշալոյսի շողերի հետ ժամտալով, ողջունում էին դեսատի հովկին, իսկ զեփիւոը իր յաւիտենական երգն էր գնդնում նրա ականջին։ Ոչխարները մտնում էին անդնդախոր ձորը և խնամքով կըրծոտում դալար խոտերը, իսկ պատանին, յենւած մահակին, կանգնում էր ժայռերի վրայ և իր հովական երգն ու սուլոցը ներքն ուղղում։ Նա ինքը մի ժայռի կտոր էր, և նրա կրծքից դուրս եկող սուլոցը որոտում էր կայծակի ուժով, իսկ իսկ անձաւները հտափակ կրկնում էին։ Ոչխարները հասկանում էին նրա երգի ամեն մի բառը, նրա ձայնի ամեն մի ելեկջը ու շարժում հնազանդ նրան։ Հեռու կատարից բարձրանում էր արծիւը և թեկերը լայնօրէն փռած ճախրում վճիտ եթերում։ Սակայն ոչոք և ոչինչ չէր կարող մօտենալ նրա հօտին, աւազակ լինէր նա, թէ զայլ արիւնարու, արծիւ լինէր նա, թէ արջ ամենի, այդ միւնոյն էր, հրացանը կորոտար և գնդակը շեշտակի կը միւէր նրա կրծքին։

Կէսօրին սև լճի ափին էր նա, Ոչխարները

մակադաւմ էին, իսկ ինքը հաւատարիմ գամփըռ-
ների հետ պառկում էր աղբիւրի կողքին: Ամպե-
րը սպիտակ շղարշով ծածկում էին արևի զէմքը,
ապա կտոր-կտոր լինում, փախչում և կուտակ-
ւում գագաթներին: Հովը շնկղնկում էր, իսկ աղ-
բը կամացուկ լսոխոջում, որ քուն բերի նրան-
երը արելը թեքւում էր դէպի լուների յետերը, հո-
վիւր հանում էր սրինզը, և սկսում իր լինային
մեղեղիները, և ոչխարները շարժւում էին դէպի
ծմակները: Կապոյտը նրա տաղաւարն էր անեղը,
կանաչները՝ նրա կողինքը քնքոյշ, իսկ այրերը՝
ապաստարանը՝ քամուց ու անձրեից, կարկափց
ու կայծակից: Այսպէս էր անցնում նրա կեանքը:
Չանձրոյթի մասին հասկացողութիւն չունէր նա,
իսկ կուրծքն լիքն էր երջանկութեամբ: Յաւն ինչ
էր, չգիտէր, իրեն օրում օֆ չէր ասել նա: Իսկ
նրա հոգին մաքուր էր, անրիծ, ինչպէս ու լճի
հայելին, որ երկինքն է գերում:

Մի անգամ էլ պառկած էր նա ու լճի ա-
փին կէս քուն, կէս արթուն: Քամու պէս մի ձայն
դիպաւ ականջին, և նա աչքերը բաց արեց: Ա-
ղաւնիների մի երամ իջաւ լճափին, հէնց այստեղ,
ուր աղբրակը ջրվէժ կաղմելով թափւում էր լիճը:
Աղաւնիները հանեցին իրենց թևերը և աղջկները
դառնալով ջուրը նետեցին: Նրանք մէկ սուզուում
էին ջրի տակ, մէկ էլ գուրս էին թռչում և կանգ-
նում ջրվէժի տակ իրենց ամրողջ հասակով: Զու-
րը փոշիանում էր և ցրելով, թափանցիկ քօղի
պէս, պատում նրանց հերարձակ գլուխները, մար-
մարէ կրծքները և հոլանի բազուկները: Նրանց
մէկը գուրս եկաւ ջրից, բարձրացաւ ժայռի վրայ

ու նստեց՝ ոտքերը կախ անելով դէպի լիճը:
Միւսները արագութեամբ հաւաքիսցին ճափի ծա-
ղիկները և սկսիցին պսակով պձնել նրա սև գան-
գուրներն, որոնք խաղում էին զեփիւռի հետ: Հո-
վիւր պատանին զմայլւած նայում էր նրանց: Կա-
մաց-կամաց նրան յափշտակից ժայռին նստածը
նրա մատաղ հոգում արթնացան մինչ այդ ան-
ծանօթ յոյզեր, և նրա սիրան սկսեց դողալ: Տե-
ղից վեր թառ նա, որ վազի, գրկի թովիչ աղ-
ջրկանն ու համբուրի, սակայն աղջրկները, նրան
տեսնելուն պէս ճացին հմայիչ ձայներով, շաս-
ալով հագան իրենց թեկերը, աղաւնի գառան ու
թռան: Հովիւր խենթի պէս վազեց դէպի ջրվէժը:
բայց իգնէր, աղաւնիները անհետացան գագաթ-
ների մէջ: Կշտոտ մի թափիծ պատեց նրան: Նա
հաւաքեց թափւած ծաղկները, ջիրմօրէն համ-
բուրելով, փնջեց ու դրեց ծոցը:

Այդ օրւանից ամեն ինչ փոխեց աշխար-
հում. ուրախութիւնը հեռացաւ և տիրութիւնը
ընկեր գարձաւ նրան: Նրա սրինզը մոռացաւ
խինդը և միշտ եղերդ էր նւազում, և ոչխարները
շփոթւում էին ու մոլորում ձամբաներին: Գի-
շերը նա չէր քնում և ասաղերին նայելով մտա-
ծում էր աղաւնի աղջկայ մասին: Ցերեկները
հօտը յանձնում էր զամփաներին և բարձրանում
թլուրները, որ գանի աղաւնիների երամը: Կտ-
օթուը մաշում էր նրա կուրծքը և առնական այ-
տերը նիհարում էին: Երազուն աչքերով նայում էր
այն գագաթին, որի յիտեռ անյայտացան աղ-
ջրկները: Երբ արեամուտին սև լիճը մեղմօրէն
ալեկոծւում էր, նա նստում էր ջրվէժի ժայռին

ու լձին նայում: Եթի յոյզերը անսղաղանում էին նրա հոգում ու չերմ արցունքները թրջում էին նրա այտերը: Այսպէս՝ անորատ հոգին չեր զիմնում սիրոց ցաւերին:

Սարերում յայտնեց մի իմաստուն դերեվ, որ եկել էր հնասառ արհելքից: Թնգում էր նրա հոչակը սարից ասր, ձորից ձոր և բինալից բինայ: Ամենքի ցաւեին գարման էր անում նա, ամենին իր մուրազին էր հասցնում: Ճամրի պաշար կապեց պատանին, եօթ ու զառ առաջն արտեհ իր ամենի ցուպն առած զնաց գերեխին զանելու: Արտնեց և գտաւ, զաները ներեց նրան, չոքեց ու խոնարհ երկիւզածութեամբ համրութից նրա աջը ու պատմեց իր գորտը Իմաստուն դերեվից կապեց իր կանաչ զօտին, փաթաթւեց սոլիտակ բինիշում, ծածկեց սոլիտակ արախչինը, տառ մատեամը Հմայիչ և սոլիտակ միքուքը շփելով՝ նայեց գրերին ու ասաց.

— Եօթը սարի յետեւմ, եօթը գեախից այն կողմը, եօթ անտաների խորքում մի կաթնալիճ էայ: Կաղնիների պուրակից կաթնազրիւներ են բզիում ու թափում լիճը: Մի զգեակ կայ լճափին: Այդտեղ է ապրում աղանի աղջիկը, այդ երկրի արքայադուստրը, որը սիրոց նետ է միել պատանի հոգին սրտին: Ամեն առառօտ լողանում է նու քում, ապա նստում կաղնիների ստերում և իր մօտ կանչում փեսացուներին, որտնք օրերով չերթի են սպասում: Մէկն իր քաջութիւնն է ցոյց տալիս, երկարովն իր գեղցիկութիւնը զոլում, երսորդն՝ շնորհքները ցուցազրում, բայց մինչ այսօր ոչ մէկին չի ընտրել նա: Թող հոլիւն էլ իր բախտը փորձի:

Երկութէ տրեխներ հազաւ պատանին, երկաթէ գուազան առաւ ձեռքը և բնկաւ աշխարհը՝ գտնելու իր սիրածին Եօթն մնգամ քառասուն օր թափանց նա և հասաւ նորական անտափն, որը հրաժարում էր ճամբայ բանալ նրա առաջ: Առաւօտեան մտնում էր անտառը, բայց մոլոր առմ էր ծառերի մէջ, մինչև երեկոյ չարչարում և յոզնած գետին ընկնում քնելու: Այզը բացւելիս՝ կրկին իր նախկին տեղումն էր, անտառի կողքին: Աննկուն տղան սուրբ Կարապետին եօթ սպիտակ խոյ խոստացաւ, եօթը շաբաթ պատ պահեց ու մի օր էլ արթնանալիս՝ իրեն զտաւ կաթնազրիւների մօտ: Ամեն ինչ իմաստուն դերեւիչը խօսքի համաձայն էր, և լին էր այնտեղ և գղեակը թովիչ և վեսացուների շարքը: Արքայադուստրը լողացաւ և նաժիշտներով շրջապատւած նստեց կաղնիների շւագում: Պատանին իսկըն ճանաչեց թէ նրան և թէ նաժիշտներին: Այդ աղանիների երան էր, որ եկել էր լողանաւու ու սև լճում:

Մօտեցաւ պատանին արքայադուստրը: Աչինչ չանէր նա փառաւորիչ և ոչ մի խօսքով շգովացանեց իրեն, այլ հովուական ցուովը ձեռքին կանգնեց աղջկայ առաջ: Արքայագուստը նայեց նրան զարմացած հայեացքով, նայեց և տիրութեամբ աշքերը քարշ արեց: Նաժիշտները զլիներնին խռնարնեցին գետին, իսկ փեսացուները հետաքրքրութեամբ հովուն էին նայում:

— Օձն իր պորտով, թոշունն իր թեով չէր կարող ու լի ափից հասնել կաթնալիճն, հովիւ պատանի, զու ինչպէս եկար,— նարցրեց արքայագուստը:

— Յո պատկերն ինձ անյաղթ թևեր էք տալիս:

— Սարերի զաւանկ, արքայադուստրը հովին չի համին:

— Աւըը փշրում է բոլոր արգելքները և բանում բոլոր փակ դռները:

Աղջիկը մտածունքների մէջ ընկաւ Հովի որոնող աշքերը, երազոտ հայեացքն և լեռնական առնականութիւնը հրապուրում էին, բայց հպարտութիւնը սանձանարում էր նրան: Երկար մտածելուց յետոյ՝ նա կանգնեց և դէպի դղեակը դիմեց: Նաժիշաները հնտեսեցին նրան: Կէս ձանապարհից նա յետ դարձաւ և ասաց:

— Փայուների որդին, ամեն օր կը գաս այս տեղ և կապասես իմ վերջնական պատասխանին, բոլոր միւս երիտասարդներն այսօրւանից ազատ են:

Եւ այն օրւանից հովիւ պատանին ամեն առաւօտ հովեական գաւազանը ձեռքին կանգնած կաղնիների տակ, կաթնաղբիւրների կողքին ըսպատում էր իր գիցունու պատասխանին: Արքայադուստրը յայտնում էր պատշգամբում և անհիսու նայում հովին, նայում և կրկին ներս մտնում առանց պատասխան տալու Օրերն անցնում էին, և սիրահարւած տղան քամում էր վշտոտ կարօտից: Նա համբոյր էր տենչում ու գուրգուրանք, բայց նրա սիրտն անյագ էր մնում: Նրա ոյժերը ցամաքում էին, բայց նա, յոյսը չը կարած, սպասում էր...=

Այս գրւածքը լոյս տեսաւ և տարածւեց Սուրէն Բակունցը մի օրինակ գնեց և ուղարկեց

Լուսիկին՝ մակազրելով՝ «Յասմիկի հոսով հարրնդ աղջկան»: Լուսիկը կարգաց և հասկացաւ, թէ ին է ասում հեղինակը, և եր երկու օրից յետոյ Սուրէնն եկաւ Ազարեանների տունը, օրիորդը, նայելով նրա աշքերին, զգաց, որ նա վերջնական պատասխան է, ուզում: Երկուն էլ լուռ էին և իշրար երիսի չիին նայում: Սուրէնը կտրմրել էր, իսկ նրա ձակատը ծածկւել էր բարակ քրաինքով՝ վերջապէս նա ասաց:

— Օրիորդ Լուսիկ, կարգացիք գրւածքս:

— Կարգացի, — պատասխանեց օրիորդը: Նրա կոկորդը չորացաւ:

— Անշուշտ հասկացաք, թէ ինչ ևմ ասում:

— Մի սովորական հէքիաթ էր, առանձին ինչ պիտի հասկանայի:

— Իրօք, այդքանը միայն:

— Ուրիշ ինչ պիտի լինէր:

Լուսիւն:

— Օրիորդ Լուսիկ, միթէ չհասկացաք, որ ես վերջնական պատասխան ևմ ուզում: Զէ՞ որ տարիներով համբ մնալ չի կարելի, միթէ պարզ խօսելու ժամանակը չի հասել...

Լուսիկը լուռ էր, իսկ նրա հոգին վերին աստիճանի խոռված էր: Ահա և վճռական բովէն, որից այնքան վախենում էր, որից խուսափել էր տարիներ շարունակ՝ գերազանելով լուռ խոկումները: Նա ատամներով զգուշութեամբ բռնել էր սուրբին շրթունքը, որ չզողայ. Նրա դէմքը մերթ կարմրում էր, մերթ սփրթնում: Նա ասաց:

— Անսպասելի քանիր էք ասում, Սուրէն:

— Ցիրաւէի: Միթէ գուք չպիտէք, որ ես ձեզ սիրում եմ...

— Ասէք, մի շարունակչք:

— Ասացէք յորդացած զետին, որ կանգ առաջ՝ այդ լինելու բան է: Խնչպէս լուսմ, եթե զըլ-խումս ուրիշ միտք, հազումս ուրիշ պատկեր չկայ, բացի ձեզնից: Չուք մի օր հարցրիք, թէ ևս ում մասին ևմ մտածում: Այժմ պատասխանում եմ: Ես ձեր մասին ևմ մտածում ու երազում:

— Ազացում եմ, մի շարունակեք, հարկաւոր է գրութիւնը հասկանալ: Պիտի ծածկել այն մըստքերն ու զգացմունքները, որոնք անհարին պահանջնիր են անում: Կատարենք այն, ինչ կարող ենք և կիանքից առելին չպահանջնենք...

Այս խօսքերը նու արտասանեց շինծու սառնութեամբ, ներքին ինքնազապաւմով և նկատեց, որ նրանք Սուրէնի վրայ շշմեցնող ազգեցութիւնն են անում: Եթա սիրար զողաց ցաւից, վախեցաւ մտանել իրեն և շփոթւած լսեց, մէկ էլ հազիւ պահելով հոգեկան հաւասարակշառութիւնը, տաց.

— Սուրէն, կեզծում եմ, ես ուրիշ ըստ եմ մտածում, զուք ճշմարիտն ասացիք, այդ մի սովորական հէքիամ չէ միայն, ուրիշ իմաստ էլ ունի, և ես բառ ամենայնի հասկանում եմ այնու առկայն ժամանակ աւելք մտածելու, չէ որ այդ այնքան էլ դիւրին չէ... սպասէք...

Եւ Էռւիկը զուրս եկաւ սհնեակից, անցաւ իր ննջարանն ու ընկաւ մահճակալի վրայց Սենեակը պատուեց նրա շուրջն ու միջնից, նա ձեռքերով ծածկեց զէմքը: Սուրէնը նայեց զունը, ծռմռած շրթունքներով ինչ որ բան մըմաց և մտածում եմ:

Սուրէնը մի այսպիսի նամակ ստացաւ:

կան մի ժամի, մի անուշ հայեացք բաւական չեն
ծարաւս յագեցնելու համար: Ես ուզում եմ մօ-
տենալ նրան, նայել նրա աչքերի բիբերին և զննել
դէմքի խաղերը, զես աւելին, ես կամենում եմ
փաթաթել ձեռքերս նրա պարանոցով, նրա զլու-
յը դնել իմ կըծքին և աչքերս յառել նրա աչքե-
րին ...

Երբեմն բոնում եմ մի խենթ ցանկութեամբ:
Մի ներքին ոյժ ինձ զրդում է, թէ զնա, բայց այդ
տան մշտապէս փակուած զուսը, վեր բարձրա-
ցիր, զաիր նրան, չոքիր նրա առաջ և ասա. քեզ
միլում եմ: Բայց այս քիչ է, ես ուզում եմ եթեր
զանալ, որ երբ զու օկ շնչես, նրա հետ միտ-
նամ քո հոգուն: Ուրիշ յանդուզն մաքեր էլ են
ծնում իմ մէջ: Ես ուզում եմ զիշերւայ ահաւոր
ժամին սպառազինւած մտնել նրա օթեանը, խլել
նրան այն ոյժերից, որոնք այնտեղ կաշկանդում
են նրան, տանիլ սէզ լիները, արծւի բունը,
եղնիկի այրը: Այնտեղ յստակ լճերի ափերին մենք
կը խաղանք սարի ծաղիկների, վայրի բաղերի ու
ցոլուն աստղերի հետ ... Աւազ այդ մաքերը զործ
չեն դառնում: Թւում է, որ այդ նրա համար մի
վտանգաւոր քայլ է, զուցէ նա կը վշտանայ: Եթէ
նա յանկարծակի տիրի, սպիտակ ճակատը կնճռո-
տի, յօնքերը կիտի, ես չեմ դիմանալ, ես կը պայ-

թեմ վշտից: Իս ցանկանում եմ, որ նա միշտ ժըպ-
տայ, որովհետեւ նրա ժպիտը ինձ հարցեցնում է,
ահա թէ ինչ ...

Ուժերս խորտակւեցին, կեանքը ծանր է,
ծանր: Թախիծն սպառնական է դառնում, որով-
հետեւ մի նոր վերք ստացայ: Մի անգամ տեսայ
խեկան սէրը, որովհետեւ համբուրեցի: Համբուրը
որտի բորբոքիչն է: Երջանկութիւնը մի անգամ
ժպտաց ու հրաժեշտ տեսց: Ահա ինչպէս պատա-
հից այդ:

Արկին այզումն էի: Նա դարձեալ բաց արեց
պատուհանը, բայց այս անգամ մտազրադ ու
շփոթւած: Սովորականից աւելի կանզնեց, ապա ձեռ-
քով մի քանի նշաններ արեց: Սկզբում ես ոչինչ
չնակացայ: Հէ որ, նրան նայելիս, մտածելուց
դադարում եմ: Բայց երբ նա, ելկիւզով փակեց
պատուհանն ու հեռացաւ, մտածեցի և հասկացայ
նրա նշանների իմաստը: Նա ուզում էր ինձ տես-
նել: Այդ միտքն ինձ ուրախութիւն պատճառեց,
ես էլ հենց այդ էի ուզում: Տեղն ու ժամանակը
նրա շարժումներից ես հասկացել էի ... Երբ խա-
ւարն իր առաջին քողը քաշեց երկրի վրայ, ես
արդէն այգու խորքումն էի, բարձր ու լայն փըռ-
ւած ընկուզենու ճիւղին յենւած և ընկած միջնոր-
մի վրայ: Սպասում էի և ամբողջ մարմնով ու-
շադրութիւն էի դարձնում: Լուսինը զուրս եկաւ,
ծառերն ազօտ տերեներ արձակեցին: Մի ճպուռ
ունիրիս տակ ճոճում էր: Նա շատ դարզու էր
երգում: Ինչպէս երեսում էր, աշնան ցուրտը նրան
զգալ էր տալիս իր մօտալուս վախճանը, խոկ նա

չեր ուզում բաժանւել կանաչ պարտիվից ու անհոգ կեանքից:

Նա եկաւ, եկաւ ստեղի տէս, զդոյշ: Ի՞նչպէս քարձրացաւ պատը, ինձ գտաւ, թնջի յենւեց բաձրանալիս, չիմացայ: Զգացի, որ երկու ձեռք փաթաթւեցին վզովս և մեր շրթունքները զոգողալով կապան իրար: Տիրեց մի խորհրդաւոր լուսութիւն: Ինձ պատեց մի ջերմ գինովութիւն, հաճոյքի սարսուռը ցնցում էր ամբողջ մարմինս, բանականութիւնը ոչնչացաւ և կիրքը գրկեց ինձ ...

Որքան ժամանակ այդպէս մնացինք, չգիտեմ, որովհետեւ ժամանակը չափելու շնորհքս կորցրել էի: Յետոյ պատահեց այն, որ մեզ իրարից ընդ միշտ անջատեց: Լուեց մի թրխսկոց, ապա մի անորոշ ձայն: Նա անարեկւած թողից ինձ ու անյայտացաւ մթութեան մէջ . . ընկած էի այնտեղ ինքնամուսացութեան մէջ, ուժասպառ ու յոդնած: Այժմ էլ շատ յոդնած եմ: Երբ տուն եկայ, գես մութն էր. ընկայ մահճակալիս վրայ, կիսաքռուն վիճակի մէջ: Հաւանօրէն քննեցի, որովհետեւ երազ տեսայ: Թւում էր, որ ես մի եղեմական պարտիզում եմ, ուր հազար գոյների ու հազար ձեւերի ծաղիկներ կային: Վարդերը ներկւած էին սոխակի սիրատենչ սրտի արիւնով, իսկ շուշանները վճիռ լճերում ընակւող կարապի թեւերի նման ձերմտկ էին: Ամեն կողմից անորոշ բուրմունքներ էին շոգիանում և օդի հետ շաղախուռմ, իսկ ծառերի սազարթներում թուզուններն էին գեղղեղում: Ես պառկած էի ծառերի ստեղուռմ, զլուխս սրտիս թագունու ծնկանը դրած: Նա ժամանում էր և ինձ նայում: Երբ աչքերը մօտեցնում էր դէմքիս, ես երկու ձեռքուվ

բռնում էի նրա զլուխիը և համբուրում նրան, բայց հէնց որ չնչում էի նրա կրծքի բուրմունքը, հարսում էի և ինձ մոռանում: Նա զլուխը բարձրացը նում էր և ժամանում, ես իսկոյն ուշքի էի գալիս: Նա պակում էր վարդի թերթերն ու նազանքով նետում երեսիս . . .

Ես կրկին այգի գնացի, տւի սովորական ազգանշանը: Ի՞զուր, այս անգամ նա չեկաւ: Ահա երեք օր է գնում եմ, սակայն նա չի գալիս ու չի գալիս: Պատուհաններն ամուր փակուած են և կրկնակի վարագուրւած: Ուրիմն մի անտեսանելի սե ձեռք նրան խլեց ինձանից . . Գուցէ այս բոլորն խկապէս մի երազ էր, մի վարդարան անուրջ . . Զգիտեմ, չգիտեմ, սակայն ինձ տանջում է յաւիտենական թախիծը . . .

Իմ սէրը մհան, նրա տեղ այժմ իմ մէջ մի վիճ է բացւել: Իմ հոգում էլ արև չի փայլում, այլ խաւար է այստեղ: Հաւանօրէն, ես, խարխափելով խաւարի մէջ, կը զլորվեմ վիճը: Ականջներումս ինչ որ ահեղ ձայներ են հնչում: Բամի ու փոթորկի է հոգուս վիճի մէջ . . .

Միթէ այս է սէրը: Կարծում էի, որ սէրը պիտի ինձ երկինք բարձրացնի, այս ինչ անդունդն է նետում: Կնոջ համբոյը ըեղմնաւորում է տղամարդու սրառում թագնւած կարօտը: Կին, ի՞նչ եւ դու, հրեշտակ, թէ դժոխքի պարինկ: Եւ այն է միւսը: Դու ես շարժում տղամարդու արիւնը և երջանկացնում, բայց քո շնչից է ծնւռում յաւեր-

ժական թախիծը, որ կարտառում է տղամարդու վեարդը և նրան բազմապիսի փորձութեան հնթարկում, ըստ աջքերն են մրմունչների մայրը ...

Հեռանալ, գնալ այսակից: Ամեն մի թուփ, ամեն խար նրան են յիշեցնում: Եթէ այսակ երկար մնամ, կը խենթանամ: Դասարանում ես աշխատել չեմ կարողանում, մտքերս քրում են, չեմ հասկանում աշակերտների ասածները և նրանց շփոթեցնում եմ: Երբեմն նրանք զարմացած նայում են ինձ, երբեմն էլ զասարանում սոսկալի աղմուկ է բարձրանում: Երեկ նոյնիսկ չնկատեց, երբ ներս մտաւ աւագ-ուսուցիչը, որ կարծել էր, թէ ես այնտեղ չեմ: Նա մօտեցաւ և սիրալիք խնդրեց, որ եթէ հիւանդ եմ, տուն գնամ: Ես եկայ տուն, բայց տանն էլ հանգստութիւն չունիմ, մենակութիւնը խեղում է ինձ, մանաւանդ գիշերները: Ես ընկերների ու սփոփանքի կարիք եմ զում ...

Ահա քանի օր է որոշել եմ, որ գնամ, բայց գեռ այսակի եմ: Այսօք չափազանց թոյլ եմ: Ի՞նչ որ շշուկներ եմ լսում, զիւղում ինչ որ խորհրդաւոր բաններ են պատմում, մոլլան ինչ որ բաններ էր խօսում, մութ ակնարկներով: Բէկի տանը աղմուկ կայ, մի արտասովոր դէպք է պատահել, մի գաղտնիք, որը լուծելու համար միջոցներ են ձեռք առել: Աստւած իմ, զուցէ նա է վտանգի մէջ, ես ինչ անեմ: Ի՞նչպէս ցնցում եմ ամեն մի ձայնից, լի՞նչպէս զողում են ձեռքերս գրելիս, զլուխս լի՞նչպէս ցաւում է: Հարկաւոր է բժշկի հետեից

մարդ ուղարկել: Տեղը հետո է, երկու ժամում՝ հազիւ այսակեղ հասնի ... Չեզքերս թուլանում են, աչքերիս առաջ մինում է, էլ շարունակել չհմ կարող ...

* *

Այստեղ յուշատերը ընդհատում է: Ի՞նթերցողին բաւականութիւն տալու համար՝ ինձնից միքանի տեղեկութիւններ եմ աւելացնում: — Ի՞նիկրայդ հիւանդութիւնից բժշկուեց, ամուսնացաւ, երկու զաւակ ունեցաւ և վախճանեց թոքերի բորբոքոցմից: Նա երբեմն պատմում էր իր տարօրինակ սիրոյ պատմութիւնը և ինքն էլ էր զարմանում, որովհետեւ չէր կարողանում բացատրել, թէ այդ ինչպէս պատահեց: Նա յաճախ կը կնում էր. աղամարդը կարող է շատ կանանց հետ կտպւել, բայց իրօք մէկն է խոկական սէրը:



պէս կրդաւ։ Մեր վերատեսուչը երբեմն, տօն օրի-
քին, իր տունն էր հրաւիրում այս կամ այն գա-
սարանի աշակերտներին։ Հերթը հասաւ և մեզ
Յիշում ևմ, Ծննդեան տօներին էր, մի պարզ ու
սառանամանի օր։ Մինչև ժամը 12-ը մենք գասա-
րանում շորերներս էինք մաքրում, մաղներս սան-
րում և օծում ամիսներով սնդուկներում թաղցը-
րած, արժանագին անուշահու ջրերով։ Նախաճա-
շեց յետոյ՝ հերթապահ վերակացուն արձակուրդի
տոմսերը բաժանեց, մի խրատական անհամ ձառ-
տաց և մեզ ազատ արձակեց։

Փողոցներում զանգազ էլնք քայլում, որ ա-
ւելի երկար մնանք ամբոխի մէջ։ Դիտում էինք
մարդկանց տենդու անցուդարձը, կանգնում զրա-
խանութների ու պատկերներ վաճառող կրպակնե-
րի առջև, զննում զրքերը, նայում սիրուն - սի-
րուն նկարներին, քիչ տիրում, կամացուկ հառա-
չում, ապա կրկին, թե՛թեկի տւած, առաջ զնում
վիճարանելով ու փոխադարձ տպաւորութիւններ
հաղորդելով։ Երկար կանգնեցինք թատրոնի առաջ,
կրկնակի անգամ կարդացինք լուլոր յայտարարու-
թիւնները և անգիր արինք գերասանների ու գե-
րասանուհիների անունները։ Մեզնից մի քանի-
ոք չմուացան իրենց յուշատետրում նշանակել
թէ որ օրն ինչ պիեսա են ներկայացնում և որ
դերասանն ինչ դեր է կատարում . . .

Վերջապէս հասանք վերատեսչի տուն Մեդ
ընդունեց նրա կինը, որն արդէն գեղեցկութիւնը
կորցրած, գունատ երեսով ու շարժուն աշքերով
մի տիկին էր, կանգնած պառաւութեան շնչքի
վրայ։ Նրան տեսնելուն պիէս մտքումս ասացի։ —

ՎԵՐԱՏԵՍՉԻ ԱՂՋԻԿԸ.

I.

Գիշերօթիկ դպրոցի սան էի, մեծ քաղաքում։
Մեր գասարանում 28 աշակերտ կար։ Թէև մենք
երբեմն կուռում էինք իրար հետ, բժախնդիր էինք
իրար նկատմամբ, սիրում էինք միմեանց պակա-
սութիւններն ուղցնել և խեղճերին ծաղրել, բայց,
ընդհանուր առմամբ, մեր գասարանն աւելի մտե-
րիմ էր, քան միւսները։ Մեր մէջ շատ էր զար-
գացած գասարանական պատռասիրութիւնը։ Իւ-
րաքանչիւր գասարան ունէր իր զաղանիքները, իր
ընտանեկան երկպառակութիւնները, արատներն
ու սրբութիւնները, որոնց մասին ուրիշների հետ
խօսելը յանցանք էր համարում։ Վայ նրան, ով
կմեղանչէր մեր դպրոցական այս էտիկետի դէմ։
Էլ փրկութիւն չկար, յարձակում էին ամեն կող-
մից։ Երբեմն էլ պատահում էր, որ, գասարանի
նամուսը պաշտպանելու համար, կուռում էինք
ուրիշ գասարանցիների հետ, և այդ կոփու հաս-
նում էր նոյնիսկ տուր ու դմիոցի։

Երբ հինգերորդ գասարանումն էինք, մեր
գասարանի ներքին գաղտնիքը հարստացաւ մի
դէպքով, որը մեզ բաւական յուղեց։ Անցքն այս-

Չարասիրս է: Ինձ դուք չեկաւ, չսիրեցի նրան: Ամենից շատ ինձ գրգռում էր նրա սրածայր քիթը: Մենք բոլորս ամաչկոտ ու շփոթուած շարժումներով մօտեցանք տիկնոջը և համբուրեցինք նրա ձեռքը: Այգես էր խրատել վերակացուն: Նա սառն ու հանգիստ հայեցքով ընդունեց մեր համբոյրը, ապա ասաց. «Աղրէք»: Այդ բառն այնքան չոր էր, որ ականջներս ծակեց: Ցետոյ նարայ արւա ընդունաբանի գուռն ու ասաց.

— Ստեփան, Ամալիա, այստեղ եկէք:

Ներս մտան մեր հասակին մի տղայ և մի աղջիկ:

— Ծանօթացէք, — ասաց տիկինը. — Իմ զաւակներն են: Դէ երեխայք հիւրերին զբաղեցրէք:

Խօսքը վերջացնելուն պէս՝ նա շրու եկաւ և ծանր քայլերով ու Հնդկահաւի հանդիսաւորութեամբ անցաւ կողքի սենևակը: Օրիորդը մեզ հրաւիրեց դահլիճ: Եկան և նոր հիւրեր՝ դիմադրինի աշակերտներ ու աշակերտուներ: Մենք սկզբում քաշում էինք, չէինք խօսում և օրիորդների հարցերին պատասխանելինս՝ կարմրում էինք ու շփոթում: Ես նոյնիսկ քրտնում էի ամաչելուց: Մենք մեծամասնութիւն էինք, ուստի քիչ - քիչ ընտելացանք մեր նոր լիճակին և դահլիճը հետպհետեւ լցուեց շշուկներով ու մանր խօսակցութիւններով: Բոլորի կենտրոնը տան տիրոջ աղջիկն էր, չքնաղ Ամալիան, որ ամենից հասակաւորն էր: Նա աշխատում էր ամենքին սիրալիք վերաբերմունք ցոյց տալ, բոլորին էլ խառնել դահլիճի կեանքի մէջ, որ ոչ ոք չձանձրանայ: Նա յաջողութիւն դառաւ անջատ խմբերը միտցան և ընդհանուր զուարձու-

թիւններ սկսեցին:

Ժամը երեքին մեզ հրաւիրեցին սեղանատուն: Մենք հերթով շաբուեցինք երկար սեղանի շուրջը: Եւելի քան տասը բոպէ ամենքն էլ լուռ էին ձաշն անցաւ սառն ու զսպւած: Վիրատեսուչն իր ձաղատ զլխով ու խիստ աչքերով վախ ու պատկառանք էր ներշնչում մեզ: Ամենից շատ նրա թաւ յօնքիրից էի վախինում: Տիկինը փըքւած էր ամուսնու կողքին և երբեմն կարգադրութիւններ էր անում պասաւորներին, երբեմն էլ ուշադրութեամբ նայում էր ամենքին, և ինձ թւում էր, թէ պատառներս է համարում: Մի ինչ որ արհամարհական բան կար նրա աչքերի մէջ: Ես չափազանց ձնշւած էի զգում ինձ ու լուռ տահլութիւն էի տածում զէպի այդ հպարտ կինը, որ այնքան բարձրից էր նայում զիշերօթիկ սառներիս վրայ: Ճաշի վերջին քիչ աշխատմութիւն մտաւ սեղանակիցների մէջ, սկսեցին կենացներ մաղթել ու երգեր տսել ...

Ես չէի խօսում, մտածում էի: Մտքերս մօրից թեքում էին զէպի աղջիկը, որը մի համականըրի զգացմունք էր ծննդրել իմ մէջ, մի զգացմունք, որ, կարծես, քիչ - քիչ շոյող յոյզի էր փոխուում: Երբ խմեցին եմալիայի կենացը, չկարողացայ զսպել ինձ, վեր թուայ տեղիցս և գնացի օրիորդի հետ բաժակս չխկացնելու: Զեռքս զողզողում էր: Անշուշտ ամենքն էլ նկատեցին այդ: Մոտիկ նստած ընկերս շշնջաց ականջիս՝ օրի՞մրդն է կարմրացրել, թէ զինին: Ես պատասխան չտուի, անկարուող եղայ մի բառ արտասանել ...

Ճաշից անմիջապէս յետոյ վերատեսուչն ա-

ուսնձնացաւ իր սենեակը: Հեռացաւ և տիկինը:
Ամենք պատ շունչ քաշեցինք: Սկսեց մի զորե-
կան, կենդանի ու ջղային կեանք, վեճ և ծիծառ
իբրար խառնւեցին ու սենհակները լցուեցին աղ-
մուկով: Տղաները շրջապատեցին Ամալիային
Այլիս նրանք չեին քաշւում: Գինին արագացրել էր
արեան շարժումը երակների մէջ. զրդիսներն ա-
նուշ էին: Միւս օրիսրդները թունաւոր ակնարկնե-
րով էին պատասխանում մեզ: Ես աշխատում էի
մօտ կանգնել Ամալիային, լսել նրա զանգականըն-
չիւն ձայնը, նայել նրա սեռի տչքերին, բայց ու-
զում էի, որ ոչոք չնկատի այդ արարքս ...

Արեն այնպէս թռաւ հորիզոնից, որ մէնք
չիմացանք երեկոյեան գտլուստը: Էլքրաբական
լամպաները լուսաւորեցին դահլիճի անկիւնները
և մեղ վրայ սփռեցին իրենց խորհրդաւոր ձա-
ճանչները:

Որոշած ժամին դպրոցում էինք: Հերթապա-
հին ներկայանալուց յետոյ՝ մտանք դաստիան:
Սերտողութեան ժամն էր, խօսելն ու աղմկելն
արգելած: Տօներ էին, զասեր չունէինք և պիտի
ընթերցանութեամբ պարապէինք: Սակայն ով է
այն տղան, որ քիչ զինով լինի, հեռանայ աղջիկ-
ներից ու նստի, կարգայ: Տառերը շարժւում էին
զրքի երեսին: Ինձ պատել էր մի անորոշ թափիծ:
Այդպէս էր լինում սովորաբար, երբ, ամառուայ
արձակուրդից յետոյ, վերապահնում էի հայրենի-
քից: Այն ժամանակ ծնողներիս ու մեր զիւղի
կարօտն էր ինձ տանջում, իսկ այս անգամ յու-
զումիս տղրիւրն Ամալիան էր, որ այրում էր իմ
մատաղ հողին: Ուղում էի մոռանալ, տարւել ըն-

թերցանութեամբ, ուրիշ մտքերի վրայ կինտքո-
նանալ, բայց ի զուր, կարգում էի, սակայն ոչինչ
չէի հասկանում: միաքս ոլանում էր մեծ փողոցի
երկարութեամբ, թատրոնի առաջով և մանում էր
վերատեսչի տուն: Սիրտս կամացուկ, կարծեա-
գաղտագողի, շարժւում էր և մի ջերմութիւն էր
պատում ճակատու: Թւում էր, թէ մի երգ եմ
լսում, մի ճնչուն ու զիւթող երաժշտութիւն: Այդ
Ամալիայի ձայնն էր, նրա թրթոուն ծիծաղը:

Մենակ ես չէի անհանդիսու: Ամբողջ դասա-
րանն էր երազում: Ոչ ոք չէր կարգում, բոլորն
էլ երեկայութեան թեկերին էին յենւել և լուռ
մտորում էին: Ժամանակն անցնում էր աննկա-
տելի: Յանկարծ զանգը տուին: պաշտօնական
լսութիւնը վերջացաւ Վայրկենարար բոլորեքեան
վեր թռան: մէկն սկսեց երգել միւսն՝ աննպա-
տակ գոսալ, բարձրացաւ ճիչ ու աղմուկ: Անշուշտ,
զինին զես իր ազգեցութիւնը չէր կորցրել: Զեմ
յիշում, թէ որն սկսեց ջութակ նւազել: մի ուրիշն
իր գլեյտան հնչեցրեց, երրորդը Ամբկահարում էր
սեղանին, մի քանիսն էլ սկսեցին պարել ...

Մի պարզասիրտ ընկեր ունէինք, մի հետա-
քրքիր խննիւկ, որին սիրում էինք իր «զարդի-
մանութեան» համար: «Տղերը, — ասաց նա, — ե-
կեք, խոստովանեցէք, թէ քանիսդ էք սիրահար-
ւել վերատեսչի աղջկայ վրայ»: Խսկոյն ամենքն
էր բռնւած զողի պէս, մի վայրկեան լսեցինք
«Է՞յ, գնե, Համօ, — զիմեց նա ինձ, — օրիորդի կե-
նացը խմելիս ինչու կարմրեցիր, հ՞ը, թէ քաջ
աղայ ես՝ ասա՞»: Ընկերներս սկսեցին ծիծաղել
վրաս, սրախօսելով կատակարանել: Ես աշխատե-

ցի, յանցաւորի պէս, հերքել, բացատրել, արդարանաւութիւն, սակայն ի գուը, այդ նրանց աւելի էք բորբոքում ու ոգորում: «Ի՞նչ էք Համօի վրայ յարձակւել, շարունակեց նա, — հիմա բոլորիդ սրտի գաղտնիքն էլ բաց ևմ անելու: Ես զիտեմ, թէ ձեղնից քանի հոգի պիտի այս գիշեր երազում տեսնեն երան, հասաչեն ու արցունիներով բարձը թրջեն: Ինձ խարել չէք կարող: Եթէ ճիշտն էք ուղում իմանաւ, հէնց ես էլ անտարեր չհմ»... Այս վերջին խօսքը լսեցին թէ չէ, սկսեցին բարձրաձայն հրհուալ ու խփել նրա գլխին. հարւածում էին ձեռքերով, գրքերով, գօտիներով, գլխարկներով, բայց նա ոչ բարկացաւ և ոչ էլ ննզացաւ...

Երբ նրանք յաղեցան ու յոզնեցին, մի քանի բոպէ լուռթիւն տիրեց: Կարմրած ու քրանած նստեցին նստարանների ու սեղանների վրայ, պատուհաններում, մին էլ բարձրացաւ ուսուցչական սեղանի վրայ: Մի քիչ հանդստանալուց յետոյ՝ սկսեցին զրուցել. վերատեսչն էին ծաղրում, տիկնոջ անաղն անում... Երբ խօսքը հասաւ Ամալիային, կրկին աշխուժութիւն եկաւ նրանց վրայ, ձայները բարձրացան, բառերը գոնսաւորւեցին և խօսքերը չերմացան: Ոմանք այլիս չին քաշում, զովում էին օրիորդի «սի յօնքերը», «վարդ ըթերը» և ողային համբոյը էին ուղարկում... Ես ոչ մի խօսք չասացի, միայն մտածում էի:

Երբ քնելու դանզը տուին, վերակացուն եւ կաւ և մեզ դուրս արեց գասարանից: Ննջարանը գնալիս ինձ միիթարում էի՝ մտքումս տսելով. «Ամբողջ գասարանն է սիրահարւած Ամալիայի

վրայ»: Սակայն այդ եղբակացութեան հետ ողբառումս գլուխ բարձրացրեց մի տհաճութիւն: Ես կը ցանկանայի, որ այդպէս չլինէր, որ մենակ ես սիրէի Ամալիային...

XX.

Անցան մի շարք ամիսներ: Ընկերներից քանիմն էին հաւատարիմ մնացել իրենց զգացմանըին, չէի իմանում, բայց նրանք շուտով դադարեցին վերատեսչի աղջկայ մասին խօսելուց: Երեի մոռացել էին: Բայց ես չէի մոռացել և թէ դասիրի ժամանակ, թէ սերտողութեանը և թէ մանաւանդ երեկոյեան զրօննելիս լուս նրա մասին էի ցնորում: Երեակայութիւնս հաղար ու մի գրաւիչ պատկերներ էր նկարում իմ զլխում: Երբեմն իմ մշուշ ապագան այնքան էր զիւթում հոգիս, որ իրական աշխարհը կատարելապէս մոռանում էի. աչ թւանշանների ահաւոր ուրբականն էր ինձ հալածում այզպիսի բոպէներին, աչ քննութիւնների սարսափը և ոչ էլ վերակացուների նկատողութիւնները. սրանք բոլորն էլ չքանում էին: Միայն մէկը կար, որ վայրկենապէս իշխ էր զարձնում իմ օղեղէն ամբոցները, ցրում միրաժ ծրագիրներս և ինձ կրկին կանգնեցնում երկրի վրայ, մեր դպրոցում: Այդ մեր զանգն էր, մեր անսիրտ «ազգաբարը», որ երբէք չէր մոռանում յիշեցնել մեզ, թէ դասն սկսւում է, կամ հարկաւոր է ճաշել, եկեղեցի գնալ... Նրա անզուլ «զընդդընդը» միշտ էլ անախորժ էր եղել ինձ համար, ի սկայմ սկսել էր ուղղակի զրուելի գառ-

Նաև, որովհետև նա ինձ սթափեցնում էր քաղցր անուբջներից և անջատում սիրուն սլատկերներից:

Մի օր մտայ գասարան և նկատեցի, որ ընկերներս մի տեսակ խորհրդաւոր հետաքրքրութեամբ փափսում են: Երբ ներս մտայ՝ իրօսողը զգարգիմանն» էր: Ինձ որ տեսաւ, տեղիցը վեր թուաւ, բանեց ձեռքս և ասաց. «Կարծեմ, ամենից շատ սրա սիրան է խոցւելու»: Բարձրացաւ մի ընդհանուր ծիծաղ: Խմ հարցին՝ թէ ի՞նչ է պատահել, նա պատասխանեց. «Ողբա, Համօ, Ամալիային նշան են զբել, յափշտակել են քեզնից»: Անիբաւները կրկին ծիծաղեցին: Ես աշխատեցի անտարեր երեսալ, ձայնակցել նրանց ծիծաղին, ուրիշներին ձեռք տանել, բայց այդ շատ արհետական էր գուրս գալիս. լուրը տիսրութեամբ էր համակում ինձ: Սակայն ես նկատում էի, որ միւսներն էլ անտարըեր չեն գէտի Ամալիայի նշանագրութեան փաստը, նրանք էլ էին ափսոսում, գժողում և նրանցից խրաքանչիւրը ծածկում էր իր իսկական զգացմունքը: Պարզ էր, որ օրիորդը մեր գասարանում ընդհանուր համակլանք էր վայելում:

Դաստիարակում երկար մնալ չկարողացայ, դուրս դնացի և սկսեցի թափառել: Այդ օրը գաս շափորեցի, սերազաւթեան ժամանակ թափնբեցի հիւանդանոցի թիթեղեայ ծածկի տակ, իսկ զիշերը, երբ ամենըը քնեցին և ննջարանը խաղաղեցի, հաղնեցի և զիշերապահից ծածուկ փախայ պարտէց: Պայծառ զոտէից յետոյ մենք կանգնած էինք եկեղեցու աջակողմեան զատում: Պարզեց մեր անելիրը: Վերատեսչի աղջկանը պսակում էին և ի պատիւ նրա՝ զգրոցի խումբն էր երգելու պասկազրութեան շարականները: Այլայլքած սրտով լսեցի այդ և սկսեցի ինձ միիթարել նրանով, որ կրկին տեսնելու էի Ամալիային: Ամենքը լուս սպասում էին: Կանանց ակնեղինները փայլվում էին ջահերի ցոլքերով: Ամանք գէտի զուռն էին նայում և անհամբերութեան նշանները ցուցագրում իրենց զէմքերի վրայ: Մէկ էլ մի փափսոց անցաւ: Եկան, մտածեցի ես Մոմերով ու գունաւոր լապտերներով ճամանչա-

առաջ: Ծառերի սուներները խաղում էին լճակի երեսին և իրենց զողովոցով խորհրդաւորութիւն տալիս նրան: Երկար մնացի այնտեղ նստած, ինքնամոսացութեան մէջ: Մէկ էլ ջղերս թուլացան և ես հեկեղոցով խղեցի լսութիւնը: Արցունքներա պլուրում էին այտերիս վրայով, իսկ հեռուց արդէն լսուում էր սփառկի քննոյց օրհներզը, որ լուսարացն էր փառարանում իր նուրբ ննջեւնների անըմբոնելի, բայց սիրտ ձմրող, ներդաշնակ հիւստածքը ...

Հետեւալ օրերը մի փափագ ունէի միայն ցանկանում էի զոնէ մի անզամ տեսնել Ամալիաշին: Այս իզձու իրականանալու բախտին արժանացաւ: Մի կրտակի երեկոյ «աղջարարը» հնչեց ոչ իր սովորական ժամին: Ամենքը հետաքրքրեցին նրա այդ տարածամ յայտարարութեամբ: Ակրջապէս վերակացուն յայտնեց, որ երգիչների խումբը եկեղեցի է զնալու, բայց չպարզեց, թէ ինչո՞ւ: Ես էլ էի երգիչ: Քսան բոտէից յետոյ մենք կանգնած էինք եկեղեցու աջակողմեան զատում: Պարզեց մեր անելիրը: Վերատեսչի աղջկանը պսակում էին և ի պատիւ նրա՝ զգրոցի խումբն էր երգելու պասկազրութեան շարականները: Այլայլքած սրտով լսեցի այդ և սկսեցի ինձ միիթարել նրանով, որ կրկին տեսնելու էի Ամալիային: Ամենքը լուս սպասում էին: Կանանց ակնեղինները փայլվում էին ջահերի ցոլքերով: Ամանք գէտի զուռն էին նայում և անհամբերութեան նշանները ցուցագրում իրենց զէմքերի վրայ: Մէկ էլ մի փափսոց անցաւ: Եկան, մտածեցի ես Մոմերով ու գունաւոր լապտերներով ճամանչա-

ռորւած մի խումբ մտաւ և կեղեցի: Հասարակութիւնը ճիշտ է երկու մասի և սպակուող զոյզը առաջ շարժւեց: Փեսացուն ըարձահասակ էր, գունատ ու նիշար, իսկ Ամալիան շասագունած էր. երջանկութեան մի մի փայլ կար նրա աչքերում: Հենց հայեացը առաւ նրա դեմքին, նրա սպիտակ զգսաներին՝ իսկոյն հոգեկան հաւասարակշռութիւնն կորցրի: Աշխարհի ամենաշգմբախտ մարդն էի այդ ժամանակ: Ես չեմ երգում, որովհետեւ ձայնս խեղզում էր կոկորդում: Ամբողջ ծխակատարութեան ընթացքում աչքս նրանից չեմ հեռացնում, դիտում էի նրա աչքերի խաղերը, արտեանունքների շարժումները . . Եկեղեցին լցւած էր մշուշով, մարդիկ անհետանում էին այդ մշուշում, իսկ նա զառնում էր մի սպիտակ ծառ՝ փնջւած յասմիկներով ու շոշաններով: Լսում էի քահանայի խօսքերը, որոնք հատ-հատ կաթիւթում էին իրար յիտեից, լսում էի, բայց ոչինչ չեմ հասկանում, որովհետեւ մտածելու չնորհքս գոլորշիացել էր . . Երգիչները մի ուրախ ու հանգիստաւոր քայլերով հեռացան: Մարդիկ խոնւցին նրանց շուրջը: Բազմաթիւ մոմերի ու լապտերների լոյսը զրկեց նրանց: Ամալիայի պսակազարդ գլուխը գեռ աչքիս առաջին էր, բայց գուան առաջ նա անյայտացաւ: Եկեղեցին դատարկւեց, ջահերը հանգցը ու մենք թաղեցինք ազօտ կիսախաւարի մէջ: Մի զգացոյն մոմ էր վառւում միայն, այն էլ հհոռւ էր, սեղանի վրայ, Արարչագործութիւն . .

թեան պատկերի առաջ: Դուրսը խաւոր էր, երկինքն ամպամած էր ու ահաւոր: Կրծքիցս մի ջերմ զգացմունք զուրս թռաւ և տեղը մնաց մի ցաւոս գաղարկութիւն . .

Այնուհետեւ մեր գասարանում այլիս վերատեսչի աղջկայ մտախն չէինք խօսում: Գուցէ մեզնից իւրաքանչիւրը մի սպի ունէր իր սրտում և զգուշանում էր քրքրել այն: Գուցէ շատերը շուտով մտացան նրան, բայց ևս այս պատմութիւնը գես յիշում եմ ամենայն մանրամանութեամբ, թէե շատ տարիներ են անցել այն օրից ի վեր: Ամեն անգամ վերյիշելիս՝ մի զուբեկան յոյզ է շարժւում կրծքիս տակ: հեռաւոր պատանեկութեանս անորոշ արձագանդն եմ լսում . .

Ն Ա Ր Գ Ի Ս.

Յուն սկսն լեզենդա.

Խրիտիկ Ենդիքարեանի յիշատակին:

Այս գեղքը պատահել է շատ տառջ, այն ժամանակ, երբ Ոլիմպոսի գագաթից էին նրամալում մարդկանց, սրտերի վրայ վիճելան էր իշխում, մաքերը՝ Աթենասը կտուալարում և ամենքի վրայ ծանրացած էր ձակատազրի ամենայաղթ կամքը: Սէրը խտրութիւն չէր գնում տառածների ու մարդկանց մէջ և ամենքը նրան հնագանդ էին:

Նա, որի մասին պիտի պատմեմ, ծնւել է կակիդեմոնիայում, վճիռ կեփիսի գեղածիծաղ հովտում: Երբ մանկիկ էր, նոճիները նրան նանիկ էին մրմնջում, իսկ սօսիները միզմիկ սօսափիւնով նրան քուն էին բերում: Նրա մայրը Լիյրիովա յաւերժանարան էր, հայրը՝ գետերի տառած փրփրուն կեփիսը:

Նրան Նարզիս անւանեցին: Նուրբ էին նրա սոկները և մկանները թոյլ, բայց ուժեղ էր Սպարտայի օրէնքը. Թոյլ մանուկները չպիտի ապլին. Սատեածային ծագութիւն անգամ վրկութիւն

չէր: Լիյրիովան գրկից իր սիրառուն զաւակին և կուսական անտառում թագնւեցաւ: Անտառն օրօրում էր նրան, իսկ թոչունները քնքշօրէն հիմնէին երգում արեածազին:

Գորովալից մօր մտորունների միակ տուարեան իր մանկան երջանկութիւնն էր, սակայն նաքիչ - քիչ տխուր խոհերի մէջ էր ընկնում: Նարգիսն ածում ու փարթամանում էր զարմանալի արագութեամբ, և պձնուում աղշեցուցիչ կեզանիւթեամբ: Այսպիսի սիրուն տղամարդ չէր տեսած նաև Ապոլլոնի հուժկու տռնականութեանը միացնում էր Աֆրադիտէի նազանի քնքշանքները:

Վարանումներով լի Լիյրիովան դիմից Զեսի տաճարը: Պատգամափոսն տսաց՝ եթէ Նարզիսն իր գէմքը չտեսնի, խորին ծերութեան կը հասնի: Եւ հոգատար մայրը նրան հեռու էր պահում փայլուն մետաղներից, յստակ գետերից ու վճիտ աղբիւրներից:

Քարանձաւի հազելի հարսը, թրթառն Արձագանգը տեսաւ Նարզիսին, տեսաւ ու սիրեց, սիրեց և ինչչու վայել է յաւերժանարարին՝ ուժդին ու խորը, քնքոյշ ու մեղուշ: Նարզիսը մերժեց նրա սէրը և անտառում խուսափում էր նրան հանգիպելուց: Վշտահար Արձագանգը ներկայացաւ Զեսին և կակծու արցունքներով մեկնեց իր դարզը:

Ամպերը գէզ կտպեցին Բլիմպոսի գտգոթին և լեռու յուզեց: Անմանները որոշեցին պատճեէ յանդուզն պատանուն և իրենց ցաւաման հատուցումը յանձնաբարեցին խորագէտ ու նախանձութիւնին՝ երկուակութեան քինախնդիր դիցու-

հուն: Նա, որ բոլըոքեց միծ աստւածունիների նախանձը, մոլորեցրեց անրիծ Պարփսին, գայթակղեցրեց աննման ելենային և Տրովագայի կործանման պատճառը եղաւ, միթէ կը խնայէր նարդիսին:

Մի օր նարդիսն զբօսանքի զուրս եկաւ նետ ու աղեղով զինավառ: Երկար թափառեց, ծաղիկներ քաղեց, փնջեր կապեց և ծաղկեպսակով զարդարեց իր զլուխը: Կէսօրին արեն այրեց նրա զլուխը, և սկսեց ստուեր ու ջուր որոնել, որ հանգստանայ ու ծարաւը յագեցնի:

Յանկարծ երևաց մի հրաշալի եղնիկ: Նարդիսը մոռացաւ իր յոզնածութիւնը ու աղեղը լարելով, ընկաւ եղնիկի յիտեից: Ճարպիկ կննդանին նրան հասցրեց սարալանջին ու անհետացաւ: Թրտնաթոր և ուժասպառ Նարդիսը՝ մոլորւած նստեց ժայռի վրայ ու խսկոյն նկատեց, որ ձորում, ձիթենիների սուեկրում մի աղրիւր է խոյնոջում: Նա վաղեց, չոգեց աղրիւրի ական առաջ, որ ագահութեամբ ծծի սառը ջուրն ու այրւած սիրտը հովացնի, բայց գեռ շրմանքները ջրին չէին հաղւել, տեսաւ իր շառագունած դէմքը: Նրա սիրտը թունդ առաւ, շարժեց և սէրն արթնացաւ նրա հոգում: Նարդիսը սիրահարւեց իր դէմքի վրայ: Նա ուզում էր սուզել ջրի մէջ և կիզող համբոյր զրոշմել զիւթող պատկերներին, բայց մոգական զօրութեամբ անշարժացել էր: Նա զմայլանքով ու ծարաւով նայում էր իր դէմքին ու տանջում: Այնքան նայեց, որ կարօտը հրդեհ դարձաւ և այրեց նրա հոգին: Նրա սիրտը թառամեց, մարմինը նիհարեց, հալւեց և յուսահատ

սիրուց միուաւ ...

Նարդիսի արիւնից հողը բեղմնաւորւեց: Աղբիւրի ափին մի վտիտ ու նուրբ բոյս բողբոջեց: Երբ արեկի կենարար շողերը նրան ջերմութիւնը սրսկեցին, նիհար ցողունը փարթամ ծաղիկ տւեց: Ծաղկեպսակի սպիտակ թերթիկները արիւնուած շուրթեր ունէին: Այպէս սակեղծեցին Ալիմպեան աստւածները նարդիս ծաղիկը:

ՍԵՏԻՆ.

Մի բեկոր արեւի մերիաթներից.

Արեն ամեն օր մեղ մօտ է զալիս հեռաւոր ավելիանոսից: Մեր աչերը լուսաւորելուց առաջ նա սուկեզօծում է բարձունքները աստածամերձ Նիմալայի լորրասքում Դմաւինդի անշէջ հուրը և երկիւզամբութեամբ համբուրում էլլուրի կատարը, ուր գես թափառում է Զարադաւաստրի ոգին:

Երբ ծովը ծիրանի է հազնում և հրդեհում գեռնատանների սպիտակափառ գաղաթները, զիւզիսաններում բացւում են հազրեավարդի կոկոնները, և սոխակն սկսում է իր նրբենի էլեգիաները:

Երբ բոլոր արեւորդիները արեածագին զնում էին երկրագելու տիեզերքի համապարփակ լուշ սատուին, արքայտկան պարտէջն էր մանում Սեֆին սազրագամի մինուձար որդին: Նա ամբագագմ, առողջ և ուրախ պատանի էր: Սեֆին բուռաստանում տկանջ էր զնում բիւրիւլի գարգում մեղեղուն, և նրա սիրտը լցւում էր ցաւոտ կարեկցութեամբ:

Կարմիր ու սպիտակ վարդերից նա պսակ էլլ հիւսում և պճնում իր սե զանգուրները: Ապա

փնջեր էր կապում և վազում հօր հարհմը ու ծաղկիները նւիրում Փիրուզին՝ բեղուին աղջկանը, ու շահը նւիրել էր իր այրի սազրագամին:

Կրակուտ Փիրուզը առնում էր վարզերը ու ամբացնում իր փարթամ կրծքին, մետաքսով ծածկուած երկու նոան մէջտեղը: Ապա նա զրկում էր Սեֆին և այրով ու յանցաւոր զգացմունքներով համբուրում նրա թուխ - թուխ աչքերն ու հազիւ նկատելի աղւամազով ծածկուած շրթունքները:

Պատանու դէմքն այրուում էր կանացի համբոյրի բոցերից, որոնք սրտի խորքից են յորդանում: Նրա կուրծքը լցւում էր անուշ, շոյով, արբաշու յոյզերով, որոնց աղբիւրը անմեկին էր նրա համբար, որովհետեւ մեղքը զեռ չէր ծնւել նրա մէջ:

Երբ Սեֆին ըմբանեց Փիրուզի կրքոտ համբոյրի գաղանիքը, հօր հրամանով կանանցի զըռները փակւեցին նրա առաջ: Նո այլ ևս Փիրուզին չէր տեսնում, և կարօտն այրում էր նրա ամբողջ էռութիւնը:

Թախիծը ներս սոզաց պատանու կուրծքը, և նրա սիրտն սկսեց հալւել: Սէրը՝ աղամարգուն յաղթահարով այդ միակ զօրութիւնը, յափշտակեց նրա երեակայութիւնը և ցանցերով զերեց նրա սիրտը: Սեֆին երազում էր Փիրուզի մասին և ապրում այն հեքիաթներով, որ պատմել էր նրան իր զիցուհին՝ հարհմի մետաքսէ զորդերի վրայ, ատլաս բարձերին յենած:

Սեֆին մի երազ տեսաւ: Իրրի թէ մտաւ պարտէզ և ծաղիկներ էր որոնում ուղարկելու նրան, որ իր կետնքն անուրջ էր զարձրել: Պար-

սովորում ամեն ինչ քանդւած էր. վարդերը թոշակին էին, յամիկները սալարել, իսկ արծաթէ հովատաշուշանները՝ սեացել:

Նա ման էր գալիս զլխիկորս թուում էր, որ արել խաւորում է, իսկ սրտում աճում էր վիշտը: Յանկարծ պարտիզի խորքից յայտնեցաւ Փիրուղը: Խոնդութեան յուզմունքով Սեփին զեպի նա վաղեց, բայց, տեսնելով աղջկայ սասն ու անտարբեր գէմքը, նետահար կանդ առաւ:

— Ի՞նչ ես անում այստեղ, հարցրեց Փիրուղը:
— Վարդ եմ որոնում, որ քեզ ուղարկեմ,
պատասխանեց Սեփին:

— Վարդ ես որոնում, բոլորովին ի զուր, ես վարդ շատ ունեմ: Ողջ լինի ու ներքինապետը, նա ինձ համար նոր սիրական է գտել, թող մարդարէն օրէնի նրան: Այդ չարաձճի տղան այնպիսի աննման վարդեր է բերում, որ այստեղ ոչ մի պարտիզում չես գտնի, նոյնիսկ շահի արքայական բուրաստանում: Երեմ ուրիշ երկրից է, հեռաւոր արևելքից: Ահա քեզ մի հատ: Նա աւելի կարմիր է, քան Արարիայի յովազների արիւնը, որ թափում էր հայրս անտալուտում որս անելիս:

Եւ աղջիկը պոկեց իր կրծքի վարդն ու տղային տւեց: Մեփին առաւ ու հոտոտեց: Ուրիշի սիրոյ վարդը անախորժ հոտ ունէր: Եթէ անյայտախոյնը ներկայ լինէր, Սեփին կսպանէր նրան, այն, կսպանէր առանց խղճահարւելու: Բայց նրան դլուխը պատում էր. վարդի բար բմունքը նրան թուլացնում էր, որովհետեւ կտիարդական էր:

— Ի՞նչ պատահեց քեզ, զունատւում ես.
հարցրեց Փիրուղը:

— Այս վարդն ինձ թունաւորում է. բայց ոչինչ, քեզնից թոյն ընդունելս էլ ինձ համար անուշ է, աւելի անուշ, քան Փենջափի մեզը. առաց Սեփին, առաց և ուշաթափւեց:

Տեսիլը չբացաւ: Սեփին արթնացաւ, մի կողմ նետեց բեհեղեայ վիրմակը, նոտեց պատուհանում և ուկսից մտածել: Ոչ ծագող արշալոյն էր նրան զրաւում, ոչ սոխակների համերզը, և ոչ էլ լուսաբացի զեփիւնն էր հովացնում նրա լորբորքւած ձակատը: Վիշտը յորդացաւ նրա կրծքի տակ, և արցունքները թրջեցին նրա այտերը:

«Տղամարդու հոգում միշտ զգւանք կայ. ու անազարտ սէր, իսկ կինը միայն թունաւորում է, որովհետեւ զաւաճանութիւնից է կերտւած»: Այսպէս մտածեց Սեփին:



զարչին, Զինսոստանից՝ թէյ ու ապակի, Յամառ-
կոսից՝ զէնքեր, Բաղդադից՝ կերպաներ, Սիրիա-
յից՝ կլարոն, թուզ ու հոտաւէտ զինի, Եմէնից՝
սուրճ...


Եւ ապրում էր Շահզենանը ձոխ ու շոայլ,
գոհ աշխարհից ու աստածներից և չգիտէր,
թէ ինչ ըսն է վիշար: Սակայն վէս արքան
Հնդկաստանի երջանիկ էր ոչ թէ արկի ապս ամ-
բաւ գանձերով և գոհարեղէնների պահստաներով,
այլ իր նազանի տիկնոջ Սաֆիէ թագուհու սի-
րով:

Դիւցազնի սիրտն է կինը, գիտունի՝ միտքը,
բանստեղծի քնարն է կինը՝ արքայի թագը,
Այսպէս էր կարծում Շահզենան թագաւորը: Եւ
իրօք, Սաֆիէն մի արկ էր, որ ծագել էր արքա-
յական ապարանքում, մի պայծառ սիրտուն՝ Հընդ-
կաստանի հորիզոնի վրայ: Թագաւորի թագի ա-
րեգակնաբայլ ապամանդն էր նա:

Եւ խմում էր Շահզենանը նուան կարմիր
զինին ոգելից, և նայում էր Շահզենանը Սաֆիէի
սև աշքերին կախարզիչ և հարբում սիրով ու զի-
նով: Բախտաւոր էր նսդիկների արքան, երջանիկ՝
Սաֆիէ թագուհու ջերմարոյր համբոյրներով: Նրա
մազերը չէին ձերմակում, որովհետեւ տանջող կա-
րուց չէր շոյել նրա նոցին:

Սակայն քամիները տարբեր աղբիւրներից
են բիխում, և նով ու զով լիսներից, և մեղմ ու
անուշ ծովերից, և տօթարեր ու կիզիչ անապատ-
ներից: Լուր եկաւ հետաւոր թաթարստանից, թէ
Սամարգանդի ահաւոր շահը, իր զօրքերն առած,
Հնդկաստան է արշաւում, որովհետեւ Շահզենանի

ՇԱՀԶԵՆԱՆԻ ԵՐԶԱՆԿՈՒԹԻՒՆԸ.



«Հապար ու մի զիշերների» նմանութեամբ.



Եւ իմաստուն Շեհերզադէն բաց արաւ իր
հուր տչքերը, շարժեց աղեղնաձի յօնքերը, նոսն-
հատ շրթունքը արքային ուղղեց և իր մեղուշ
ձայնով ասաց.

— Բարձր ու հոգարտ են Համալայեան լեռ-
ները. կւերիստը ամպերի հետ է մարտնչում և
շանթերին արհամարհում, բայց նրանցից էլ ոչդ,
նրանցից էլ ահարկուն Շահզենան թագաւորն էր,
նաև, որ հրամայում էր Գանդէսին ու ինդուն:

Լայնալանչ Հնդկաստանը խոնարհում էր
նրա առաջ, և ամբողջ Արևելքն իր բարիքները
նրա արքունիքն էր ուղղում: Իրանն ուղարկում
էր լալուր փիրուզ, Սըսարխան՝ մարգարիտ ու
նժոյզներ, Հայաստանը՝ որդն—կարմիր, Փենջա-
փը՝ մեղք, Տիրեթը՝ մուշկ՝ Փիւնիկէն՝ արմաւ ու
ծիրանի... Զանգեան կղզիներից հուլէ ու քափուր
էր ստանում նա, Աֆրիկայից՝ փղոսկը, մեխակ ու

փառքն ու համբաւը նրան հանգստութիւն չեն
տալիս:

Ցասումը պատեց հնդիկների թագաւորին.
Կանչեց նա մեծ վեղրին, հրամայեց հաւաքել զօր-
քերը և պատրաստ լինել՝ վազր և եթ ձանսապարհ
ընկնելու դէպի Թագթաբատան: — Անհրաժեշտ էր
պատժել յանդուզն շահին և ջախջախել նրա զօր-
քը իր խոկ սեպհական հողում, Հնդկաստանի սահ-
մաններից հեռու:

Անթիւ անհամար գնդերս եկան արքա-
յական Ռատանից, բոլորն էլ իրուխտ ու զինավառ:
Փոշին ծածկել էր արեի երեսը, խոկ ձիերի զո-
փիւնից, կառքերի ճռճոցից խլացել էին թէ մար-
դիկ, թէ կենդանիները: Ամենից վերջը գնում էր
ինքը թագաւորը՝ շրջապատած հազարուոր զրա-
նիկներով ու իշխանազուններով, որոնք նստուած
էին ամրուտն երիվարների վրայ:

Շանթեր էին ցայտում Շահզենանի սպիտակ
նժոյգի աչքերից: Նրա բաշը փրփրուն էր, աս-
պանդակները՝ ոսկի, և սահնձը՝ մարզաբաշար:
Սակայն հեծեալը տխուր էր: Նրա արքայական
հայեացքի մէջ մի վշտոտ փայլ կար: Դժւարին էր
սիրելիից անջատւելու ժամը: Առաջին անդամն
էին կարօտի շողերը ներս սովում նրա կուրծքը:

Դեռ հասարակածի բարակ արել նոր էր
գլուխը թագել Պարսից ծովում, երբ հնդկաց բա-
նակը կանգ առաւ հանգստանալու: Թագաւորի
վրանը վեհօրէն բազմեց ծաղկաւէտ բլուրի լանջին
Նրա վրայ ծածանում էր առիւծազարդ գինազրօ-
շը: Պառկած էր Շահզենանը վրանում, սակայն
անհանգիստ էր նրա քունը, տխուր մտքերը պա-

շարել էին նրան, սիրաը լցւում էր կարօտի յա-
գերով ... Սաֆիի թագուհու մասին էր մտմում
նա ...

Խոնկած հոգով՝ երազ տեսաւ նա: Զբոնում
էր արքունի բուրաստանում, Սաֆիէի հետ: Սյդ
եղինական պարտիզում նրանք յաճախ էին սէր
վայելել՝ վարդերի անմահական բուրմունքով գի-
նովցած: Յանկարծ թագուհին մի զրախտահաւ-
դարձաւ, թուաւ և թառ եղաւ երկնասլաց չինարու-
նիւցին: Արքան ապշած նայում էր զրախտահաւ-
դին, որ, զեղանի ագին բաց արած, ուզում էր
զարմացնել նրան իր փետուրների նրբութեամբ:
Մէկ էլ զրախտահաւը մի վայրկեանում ապաւ-
դարձաւ, մի սկ ու անապին ապաւ, որ ցած իջաւ,
իր սուր ճանկերով բռնեց թագաւորին և վերի
քաշեց նրան: Արևին իսկոյն խաւարեց:

Սարսափահար վեր թուաւ Շահզենանը, իր
մօտ կանչեց վեղրին ու ասաց:

— Բեր իմ նժոյգը, գու էլ քոնը նստիր:
Պիտի վերագանանք տուն և զեռ արե չծա-
գած կրկին այստեղ հասնենք: Բանտկում թող
ոչ ոք չիմանայ այս մասին, մենք ծպտեալ ենք
գնում:

Ծառան առանց յապաղելու կատարեց տիրոջ
հրամանը: Դեռ արուսեակի շողերը չէին միւել
երկնքի կուրծքը, որ նրանք հասան ապարանք:
Իրենց ծանօթ զաղանի անցքերով մասն պարտէզ,
ձիերը կագեցին, բարձրացան մարմարիսնէ սան-
դուղքներով և կանգ առան ձենապակով պատած
ու հայելիներով պճնւած մեծ դահլիճում:

— Վեղիք, — ասաց թագաւորը. — Գնա, հան-

զստացիր, երկու ժամից յիշոյ ճանապարհ ենք
ընկնելու:

Ահղիը խոնարհ զլուխ տւեց ու հեռացաւ,
իսկ արքան զգուշութեամբ մօտեցաւ ննջարանի
դսանը: Նրա սիրալ զողզողում էր, նա ուղում էր
քնած զոնել իր Սափիէին ու արքիս ճամրոյր-
ների ջերմութեամբ զարթեցնել նրան և անակըն-
կալ երջանկութեամբ զւարթացնել: Կամացուկ
բաց արաւ զուու և ներս մտաւ . . .

Ա՛, սարսնի: Սափիէ թագուհին արքայական
անկողնում մի ուրիշ սպամարզի զրկում էր քնած.
մաւշ - մաւշ շնչում էր նաև հոլանի բազուկները
սիրեկանի վզովը փաթաթած, երջանկութեան
ժպիտը՝ զէմքին . . . իսկ առաստաղից կախուած կա-
ռոյտ կանթեղը խորհրդաւոր լոյս էր սփուռմ
նրանց վրայ:

Եիկացած մախաթներով քրքրեցին հնդիկ-
ների արքայի սիրալ: Կարօնն ու զայրոյթն իրար
բախւեցին . . . նահզենանը քաշեց սուրը, որ եր-
կուսի զլուխն էլ կարի մի հաւածով, սակայն
ձեռները թուլացան. նա սուրը նետեց պարսկա-
կան զորդի վրայ, զուրս եկաւ զա՞լիճ և նստեց
թաւշապատ բազմոցի վրայ: Գիշերւայ ահաւոր
լոռութինը զրկեց նրան: Նրա զլխից թսան թագն
ու գահը, զէնքն ու զօրքը և ահարկու թշնամին:
Սև ազուրը կլանեց նրա ուշքը . . .

Օձի թոյն ունի կինը. վմյ այն տղամար-
դուն, ում կը խայթի կինը, որովհետեւ նրա հասց-
րած վէրքն անրուժելի է: Այսպիսի մի միտք ան-
ցաւ նահզենան թագաւորի զլխով:

Երբ երկու ժամից յիշոյ վեղիքը բարձրա-

նում էր սանդուխքով, ներսից մի այնպիսի քըր-
քիջ լարձացաւ, որից սարսուռ անցաւ վեղիքի
մարմնով, բոլոր սենեակները դզբգացին, Սափիէն
արթնացաւ իր սիրեկանի զրկում, և պարտիզի
սաղարթներում հանգչող թոշանները սոսկումի
աղաղակ բարձրացրին . . .



Գիրքը տպւած է Լոթիս ճնիք տպարտմառում նախ առ պատճառսով, որ տպագրութեան յանձնելու ժամանակ Երեւանում յարմարաւը տպարան գոյութիւն չունէր, ապա՝ որովհետև անհրաժեշտ քանակութեամբ եւ լու որտեսվ թուղթ միտյեն կաթածնում կարողացայ գտնել։ Սակայն այս հանդամանն ունեցաւ եւ իր բացասական հետեւանդքը կրեւանում անհրաժեշտ պարտականութիւն ունենալու պատճառով չկարողացայ Լոթիս ճնում ապրել եւ անձամբ զերաշնկել տպագրութեան գործին, որի հետեւանդք տպագրութիւնը կատարւեց անիմամ եւ գիրքը նւազացաւ ուղղագրական, բաւերի, նոյնիւ մորի բազմաթիւ սիսալներով։ Ընթերցդի նորոգութիւնը չացելով՝ այս աել յիշատակում իմ այն զիրալիները միայն, որոնք մորի ըմբռման համար անհրաժեշտ են։

Երես	Տոլլ	Պարագ	Է	Այնի լինի
13	ն. 14	Մեսրոպ		Արզուման
14	· 2	Վաճառականի...		Վաճառականի
			Պուռոր	
23	· 9	Հուռա տբոտում էին		Հուռա նատում էին
31	· 11—12	Իսկ իսկ անձուները	իսկ անձուները	
		Հուպիտեւ		Հուպիտն
49	դ. 8	Հաֆչի		Հափչի
52	ն. 9	Նրա մարդկութեան	Նրա մարդասիրութեան	
		ՄՈՒԱԹ		Առաջ!
54	դ. 4	Թղլամագլութիւն		Թղլամագլութութիւն
61	· 7	մեր սիրոյ յաջոզու-	մեր սիրոյ յիշոզու-	
		թիւներով		թիւներով
62	· 4	այս փառքի հետ		այս վանքի հետ
65	ն. 14	միտքն է որոնում		միտքն է որում
66	դ. 7	օդն այնքան		օդն այնքան
·	դ. 15	նրա փոշացող թիւն		նրա փոշացող թիւն
69	· 9	մեր տանի,		մի տան,
73	ն. 4—5	ամեսող մարմնով		ամեսող մարմնով ու-
		ուշագրութիւն էի		շագրութիւն էի գործ-
		գարձնում		գիւլ,
78	դ. 13	Վարդարան անուշը	Վարդարուն անուրը	
76	· 5	ամեն խար		ամեն քար
·	· 11	նոյնիսկ չնկատեց,	նոյնիսկ չնկատեցի,	
85		Հարկաւոր է		Հարկաւոր է
90	դ. 3	Վարդարկութիւն		Վարդարկութիւն
93		Վեներան էր		Վեներան էր
		Այսպէս		Այսպէս

ՀՀ Ազգային գրադարան



NL0339938

31795